ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ «ՎԱՆԱՁՈՐԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 9 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի 2024-2029ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ....................................................................................................................................4

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ............................7

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

1.Ուսումնական հաստատության ֆիզիկական վիճակի և նյութատեխնիկական բազայի վերլուծությունը...........................................................................................................................9

2.Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծությունը...........................................................................................................................14

3. Հաստատության համագործակցությունը ՏԻՄ-ի, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմնի, շահառու կազմակերպությունների հետ.......................................................................15

4. Հաստատության խորհրդկցական մարմինները.....................................................................19

5.Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը......................28

6. Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը......................31

7.Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ներկայացումը...........................................................................................................................36

8.Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծությունը...........................................................................................................................37

9.Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծությունը...........................................................................................................................41

10.Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը՝ դրանց արդյունավետության, ցուցանիշների շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից.................................43

ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ, ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ,ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ՌԻՍԿԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

1.Զարգացման ծրագրի նպատակներն ու ակնկալվող արդյունքները.......................................45

2. Հաստատության շենքային պայմանները, նյութատեխնիկական բազան...............................47

3. Կրթության որակի բարձրացում..........................................................................................48

4. Մանկավարժական աշխատողների զարգացման կարիքների բավարարում.........................49

5.Համագործակցություն կրթության գործընթացի մասնակիցների, շահառու խմբերի հետ.......50

6. Ուսումնական հաստատության խորհրդակցական մարմինների գերծունեության բարելավում......51

7.Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ապահովում..............52

ՈւՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1.Կրթական կարիքների նկարագրությունը.................................................................53

2.Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին.....................................................54

3.Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին և ներուժին.................................................................................55

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1.Կրթության որակի, ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կառավարման գնահատման չափանիշներ....................................................................................................56

2.Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի գնահատման չափանիշներ..58

3.Աշխատակազմին արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ապահովման գնահատման չափանիշներ....................................................................................................59

4.Դպրոց-համայնք կապերի, ծնողական համայնքի, գործընկերների հետ համագործակցության, արտադպրոցական և երկարօրյա ուսուցման գնահատման չափանիշներ...................................61

3.Հալածանքի, օտարման և բռնության կանխարգելման գնահատման չափանիշներ.................62

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

1. Վերահսկողության մեխանիզմների ընդհանուր բնութագիրը..............................................63

2.Ուստարվա յուրաքանչյուր կիսամյակի ավարտին ներկայացվող ԴԶԾ-ի կատարողականի հաշվետվության օրինակներ..........................................................................................65

ՀԱՎԵԼՎԱԾ..........................................................................................................................69

# ԱՌԱՋԱԲԱՆ

**Կրթությունը չի նախապատրաստում կյանքին, կրթությունն ինքնին կյանք է:**
**Ջոն Դյուի**



Ճիշտ է նկատել ամերիկացի մանկավարժ Ջ. Դյուին՝ կրթությունն անգիր արված սահմանումները, թեորեմները, ժամանակագրությունն ու փաստերը չեն, լիարժեք ու որակյալ կրթությունը կարողունակ, սոցիալապես կայացած, իրավագիտակից, մտածել, կշռադատել ու եզրահանգումներ անել իմացող սերունդ ունենալն է, ինչին էլ այսօր ուղղված է մեր երկրում իրականացվող կրթական բարեփոխումներն ու բարելավումները:

Ժամանակն ապացուցում է, որ անգիր արված շարադրանքը, բարձր գնահատական ստանալու համար ձեռք բերված գիտելիքը, ուսուցչակենտրոն ուսուցման մոդելը տարիներ շարունակ կազմաքանդել են մեր կրթական համակարգը, սովորողները չեն ամբարել կայուն գիտելիք, որը կարող էին գործածել, կիրառել: Ակադեմիական սահմանափակումներն ու կարմիր գծերը, որոնք որևէ կերպ չեն խրախուսել գրքային գիտելիքից զատ այլ տեղեկատվության հավաքագրումը, մշակումն ու ներկայացումը, սահմանափակել են մեր սովորողների մի շարք առանցքային ու կարևոր նշանակության կարողունակությունների զարգացումը՝ վերջիններիս դարձնելով գրքային պարբերությունների «գերիներ»:

Վերը բերվածով պայմանավորված՝ գիտակցում ենք, որ ժամանակն է փոխել հայացքը կրթության նկատմամբ, ուսուցման գործընթացը դարձնել առավել հասանելի և սովորողակենտրոն, որպեսզի ուսումնառությունը սովորողների համար չդառնա լոկ պարտադրանք, այլ վերջիններս հաճույքով և բարձր մոտիվացիայով գիրք կարդան, համացանցային աղբյուրներից, գրադարաններից օգտվեն, մշակեն ու հետազոտեն տեղեկատվություն, ձեռք բերեն վերառարկայական ու

միջառարկայական գիտելիքներ, գտնեն ու մեկնաբանեն պատճառահետևանքային կապեր, սովորեն սովորել և ինքնուրույն կիրառեն գիտելիքն ու հմտությունը, դուրս գան ուսուցչի անմիջական հսկողությունից՝ ջնջելով կարմիր գծերն ու կոտրելով կարծրատիպերը, որոնք որևէ դրական ազդեցություն չեն ունենալու՝ վերջիններիս ձևավորման, կրթության ու զարգացման հույժ կարևոր գործընթացում: Դպրոցը կարևոր շրջափուլ է անձի ձևավորման ու կայացման համար, ուստի ուսուցման ու դաստիարակության գործընթացը պետք է լինի հարմարավետ, հասանելի, հասկանալի, աջակցող ու մոտիվացնող, որպեսզի ապագայում մենք ունենանք գիտակ ու կարողունակ մասնագետներ, պատասխանատու քաղաքացիներ, ապահով ու զարգացած պետություն:

Բարեկարգ, անվտանգ, տեխնիկապես հագեցած, կարողունակ ու նորարար մանկավարժական աշխատողներով դպրոց ունենալը յուրաքանչյուր պետության հարստությունն ու ձեռքբերումն է, իսկ այդպիսի միջավայրում, անշուշտ, հնարավոր է ապահովել ժամանակի կրթական միտումներին համապատասխան կրթական միջավայր, որտեղ հնարավոր է արժանապատիվ կերպով իրացնել բոլոր սովորողների կրթության իրավունքը՝ ակնկալելով որակական ու քանակական բարձր արդյունքներ:

Այսպիսով, սույն զարգացման ծրագրում փորձ ենք կատարել ուրավգծել հենց այսպիսի կրթական միջավայր ունենալու մեր տեսլականը՝ զերծ մնալով սին ու դատարկ ճոռոմաբանություններից կամ ուղղակի ձևակերպված ականջահաճո մտքերից: Այդ նպատակով՝

- կատարվել է ուժեղ և թույլ կողմերի համակողմանի վերլուծություն՝ըստ ոլորտների,
- սահմանվել են հստակ նպատակներ՝ առաջադրելով դրանց իրականացման կոնկրետ խնդիրներ, ժամկետներ, անհրաժեշտ մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսներ,
- ներկայացվել են զարգացման ծրագրի իրականացման հնարավոր խոչընդոտները, ռիսկերը՝ սահմանելով դրանց մեղմմանն ու չեզոքացմանն ուղղված գործողություններ,

- ըստ ոլորտների սահմանվել են ուսհաստատության զարգացման ծրագրի արդյունքների չափման մեխանիզմներն ու գործիքները,
- մշակվել են ԴԶԾ-ի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները:

Այսպիսով, հիմք ընդունելով ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատված ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջները և ձևաչափը, զարգացման ծրագրի փորձաքննության չափանիշները, դպրոցում իրականացվող ներքին և արտաքին գնահատման չափանիշները, մանկավարժական կոլեկտիվի, սովորողների և ծնողների հետ իրականացված քննարկումները, դպրոցի առաջնային կարիքները, ոլորտին վերաբերվող մի շարք իրավական ակտեր՝ մշակվել է «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2024-2029թթ. զարգացման ծրագիրը, որը դպրոցի վարած քաղաքականության հիմքն է, որակյալ ու կրթական ներկայիս միտումներին համապատասխանող դպրոց ունենալու տեսլականը:

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դպրոցը հիմնադրվել է 1953թ.՝ որպես «Խաչատուր Աբովյանի անվան թիվ 9 միջնակարգ դպրոց»: Երկրաշարժից հետո՝ 1999թ., դպրոցի շենքի տեղում կառուցվել

է նոր երկհարկանի շենք, իսկ 2003թ. կատարվել է դպրոցի անվանափոխություն՝ Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ:

| | |
|---|---|
| Հանրակրթական ուսումնական հաստատության անվանումը | «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ |
| Հանրակրթական ուսումնական հաստատության հասցեն | Հայաստան, Լոռու մարզ, Վանաձոր Զորավար Անդրանիկի փող., 71 շենք |
| Հանրակրթական ուսումնական հաստատության ինտերներտային կայքի հասցեն | https://vanadzor9.schoolsite.am/ |
| Հանրակրթական ուսումնական հաստատության էլ. փոստի հասցեն | **vanadzor9dproc@mail.ru** |
| Հանրակրթական ուսումնական հաստատության պետական ռեգիստրում գրանցման համարը | 26.210.02084 |
| Գրանցման ամսաթիվ | 2003.01.22 |
| Հանրակրթական ուսումնական հաստատության շինության բնութագիրը | ոչ տիպային |
| Հանրակրթական ուսումնական հաստատության հարկայնությունը | երկհարկանի |
| Հանրակրթական ուսումնական հաստատության տիպը ըստ իրականացվող հիմնական ծրագրերի | հիմնական |
| Հանրակրթական ուսումնական հաստատության տիպը ըստ իրականացվող կրթական ծրագրերի աստիճանի | տարրական/1-4/, հիմնական/5-9/ |
| Հանրակրթական լիցենզիայով սահմանված աշակերտների թիվը | 197 |
| Աշխատանքային շաբաթը | հնգօրյա |
| Աշխատանքային ռեժիմը | միահերթ |
| Շինության ջրամատակարարումը | շուրջօրյա |
| Շինության կոյուղացումը | կենտրոնացված/բարվոք/ |
| Ջեռուցման ձևը, (վառելիքի տեսակը) | լոկալ-գազ |


ԼԻՑԵՆԶԻԱ
№ 0045
14 2010
ԼԻՑԵՆԶԻԱ
№ 0050
14 2010

*Դպրոցն ունի.*

| Առաջին հարկ | | Երկրորդ հարկ | |
|---|---|---|---|
| Տարածքի անվանումը | Չափը`մ$^2$ | Տարածքի անվանումը | Չափը`մ$^2$ |
| Ռեսուրս կենտրոն | 22 | Ուսուցչանոց | 33,6 |
| Բուժկետ | 8 | Տնօրենի աշխատասենյակ | 33,6 |
| Դասասենյակ 1 | 33,6 | Ընդունարան | 8 |
| Դասասենյակ 2 | 33,6 | Լաբորատորիա | 30 |
| Դասասենյակ 3 | 33,6 | Գրադարան | 38 |
| Դասասենյակ 4 | 33,6 | Կերպարվեստի սենյակ | 22 |
| Դասասենյակ 5 | 33,6 | Արմաթ լաբորատորիա | 33,6 |
| Դասասենյակ 7 | 33,6 | Համակարգչային | 33,6 |
| Ճաշարան | 33,6 | Դասարան 6 | 33,6 |
| Խոհանոց | 33,6 | Դասարան 8 | 33,6 |
| Կաթսայատուն | 6 | Դասարան 9 | 33,6 |
| Սանհանգույց 1,2,3 | 35,9 միասին | ՆԶՊ-ի դասասենյակ | 22 |
| Հաշվապահի սենյակ | 12 | Զենքի պահեստ | 8 |
| Էլեկտրականության սենյակ/շիտ/ | 6 | Սանհանգույց | 12,6 |
| | | Սանհանգույց1,2/միասին/ | 12,6 |



# ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

## 1.Ուսումնական հաստատության ֆիզիկական վիճակի և նյութատեխնիկական բազայի վերլուծությունը

Շենքային բարվոք, անվտանգ, ԿԱՊԿ ունեցող սովորողների համար հարմարավետ և սահմանված չափանիշներին համապատասխան շենքային պայմանների առկայությունը մեծ նշանակություն ունի արժանապատիվ և որակյալ կրթական համակարգ կառուցելու ճանապարհին: Սա առաջին հերթին արտահայտում է պետության և շահառու այլ խմբերի դրական վերաբերմունքը դպրոցի, կրթության նկատմամբ: Բացի այդ, բարեկարգ դպրոց ունենալն ու հարմարավետ ուսումնական պայմանների ապահովումը լրացուցիչ խթան է սովորողների մոտիվացիայի բարձրացման, դպրոցը սիրել տալու համար, ուստի կարևորում ենք հնարավոր բոլոր ռեսուրսների օգտագործումը՝ միտված առավել բարեկարգ, հարմարավետ ու ապահով շենքային պայմաններ ունենալուն:

*<u>Աղյուսակ 1. Դասարանների թիվը՝ ընթացիկ և նախորդ 3 ուստարիների համար</u>*

| Դասարանների թիվը | 2020-2021 ուստարի | 2021-2022ուստարի | 2022-2023ուստարի | 2023-2024ուստարի | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|---|
| 1 -ին դասարան | 1 | 1 | 1 | 1 | հաստատուն |
| 2-րդ դասարան | 1 | 1 | 1 | 1 | հաստատուն |
| 3-րդ դասարան | 1 | 1 | 1 | 1 | հաստատուն |
| 4 -րդ դասարան | 1 | 1 | 1 | 1 | հաստատուն |
| 5-րդ դասարան | 1 | 1 | 1 | 1 | հաստատուն |
| 6-րդ դասարան | 1 | 1 | 1 | 1 | հաստատուն |
| *7-րդ դասարան* | 1 | 1 | 1 | 1 | հաստատուն |
| *8-րդ դասարան* | 1 | 1 | 1 | 1 | հաստատուն |
| *9-րդ դասարան* | 1 | 1 | 1 | 1 | հաստատուն |
| *ընդամենը* | 9 | 9 | 9 | 9 | հաստատուն |

*Աղյուսակ2 . Տվյալներ դասասենյակներում սեղան-նստարանների դասավորվածության և թվի վերաբերյալ*

| Դասասենյակի համարը | Դասասենյակի մակերեսը (քմ) | Սեղան-նստարանների դասավորվածության ձևը(շարքերով,շրջանաձև,T-աձև, Π-աձև,խառը) | Սեղան-նստարաններիթիվը | Սեղան-նստարանների շարքերի և միմյանց միջև հեռավորությունները |
|---|---|---|---|---|
| Դասասենյակ N1 | 36 քմ | շարքերով | 15 մեկտեղանոց | 0,6 |
| 2-դասասեն. | 36 քմ | շարքերով | 19երկտեղ-ոց, | 0,6 |
| 3- դասասեն. | 36 քմ | շարքերով | 6երկ-ոց | 0,7 |
| 4- դասասեն. | 36 քմ | շարքերով | 9երկ-ոց | 0,6 |
| 5- դասասեն. | 36 քմ | շարքերով | 8երկ-ոց | 0,6 |
| 6- դասասեն. | 36 քմ | շարքերով | 8երկ-ոց | 0,6 |
| 7- դասասեն. | 36 քմ | շարքերով | 10երկ-ոց | 0,5 |
| 8- դասասեն. | 36 քմ | շարքերով | 10երկ-ոց | 0,5 |
| 9- դասասեն. | 36 քմ | շարքերով | 9երկ-ոց | 0,6 |

*Աղյուսակ3. Տվյալներ յուրաքանչյուր դասասենյակներում մեկ սովորողին ընկնող մակերեսի վերաբերյալ*

| Դասասենյակի համարը | Դասասենյակի մակերեսը (քմ) | Մեկ սովորողին ընկնող մակերեսը(քմ) | Նորմերից պակաս կամ ավել մակերեսը (քմ) |
|---|---|---|---|
| Դասասենյակ N1 | 36 քմ | 2.4 | -0.4 |
| 2 -դասասեն. | 36 քմ | 1.8 | -0.4 |
| 3 -դասասեն. | 36 քմ | 1.5 | -04 |
| 4 -դասասեն. | 36 քմ | 2 | -0.6 |
| 5-դասասեն. | 36 քմ | 3.6 | -0.5 |
| 6 -դասասեն. | 36 քմ | 1.1 | -0.5 |
| 7 -դասասեն. | 36 քմ | 1.3 | -0.3 |
| 8 -դասասեն. | 36 քմ | 1.7 | -0.4 |
| 9 -դասասեն. | 36 քմ | 1.6. | -0.6 |

*Աղյուսակ 4. Տվյալներ հաստատության գրադարանի և դրա գործունեության մասին*

| Ցուցանիշ | Տվյալներ |
|---|---|
| Գրադարանի տարածքը ք.մ-ով | 38քմ |
| Գրադարանում համակարգիչների թիվը | 1 |
| Գրադարանում ինտերնետին միացված համակարգչների թիվը | 1 |
| Գրադարարանում կամ ընթերցասրահում նստատեղերի թիվը | 14 |
| Գրադարանային ֆոնդում առկա գրքերի (բացառությամբ ՀՀ ԿԳ նախարարության կողմից երաշխավորված հիմնական դասագրքերի) ընդհանուր թիվը, այդ թվում | 1900 |
| Գեղարվեստական գրքերի թիվը | 2530 |
| Տեղեկատվական գրքերի թիվը (բառարաններ, հանրագիտարաններ, ատլասներ և այլն) | 131 |
| Ուսումնամեթոդական գրքերի թիվը | 44 |
| Ամսագերի թիվը | 110 |
| Գրադարանից միջինում ամսեկան օգտվողների թիվը | 58 |

*Աղյուսակ 5. Տվյալներ հաստատության ուսումնական լաբորատորիաների, կաբինետների և դահլիճների վերաբերյալ*

| Լաբորատորիաներ, կաբինետներ և դահլիճներ | Առկա գույքը, լաբորատոր սարքավորումները, պարագաները | Ուսումնա-նյութական, ուսումնա-դիդակտիկ նյութերը | Լրացուցիչ, գույքի, սարքա-վորումների, պարագաների նյութերի կարիքը |
|---|---|---|---|
| Ֆիզիկայի լաբորատորիա, կաբինետ | Էլեկտրական մեք. Ուժաչափ, | Պաստառներդաս ագրքեր | Նոր չափիչ սարքեր |
| Քիմիայի լաբորատորիա, կաբինետ | Փորձանոթներ, Կոլբա, Սպիրտայրոց | Պարբերական աղյուսակ | Լվացարան Սպիրտայրոց Հայտանյութեր Ալկալիներ Կշեռք՝ կշռաքարերով |
| Կենսաբանության լաբորատորիա, կաբինետ | Հերբարիում, Մարդու օրգանների մոդելներ Պաստառներ | Մկավառակներ Էլ.դասեր | Ցուցաանմուշներ |
| Աշխարհագրության լաբորատորիա, կաբինետ | | | Համակարգիչ Պրոեկտոր Աշխարհի ֆիզիզկական քարտեզ |
| Պատմության կաբինետ | Քարտեզներ Պաստառներ | | Ցուցանմուշներ |
| Ռազմագիտության | Ուսումնական զենք- | Պաստառներ | Լրացուցիչ զենք |

| | | | |
|---|---|---|---|
| կաբինետ | զինամթերք | | |
| Համակարգչային լաբորատորիա, կաբինետ | 9 համակարգիչ 1տպիչ սարք | Էլ.դասերի սկավառակներ | Համակարգիչներ Պրոեկցիոն և տպիչ սարքեր |
| Օտար լեզուների լինգաֆոնային կաբինետ | | Այբբենարան Պաստառներ | |
| Արհեստանոց (նշել ինչպիսի) | - | - | - |
| Միջոցառումների դահլիճ | - | - | - |
| Մարզադահլիճ | - | - | - |
| Այլ | | | |

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| • Լուսավոր դասասենյակներ<br>• Ուսումնական հաստատության շենքը մասնակի վերանորոգված է:<br>• Ուսումնական հաստատության շենքի շահագործումը համապատասխանում է շահագործման անվտանգության նորմատիվներին:<br>• Ուսումնական հաստատության շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր:<br>• Ուսումնական հաստատությունն ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով: | Դպրոցի շենքը ոչ տիպային է, հարմարեցված, առարկայական դասասենյակների համար համապատասխան տարածք առկա չէ: |
| Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ հաստատության շենքին: | Ուսումնական հաստատության գույքը ենթակա է հիմնանորոգման կամ փոփոխման: |
| Ուսումնական հաստատության տարածքը մաքուր է, հաճախակի են իրականացվում շաբաթօրյակներ: | Դպրոցի ջեռուցման համակարգը ձմռան ամիսներին լիարժեքորեն չի կարողանում ապահովել սահմանված ջերմաստիճանը և կարիք ունի տաքացուցիչների համալրման: |
| Ուսուցիչների և աշակերտների ջանքերով դպրոցի ետնամասում հիմնվել է պտղատու այգի: | Ուսումնական հաստատության սովորողները «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսումնական դասընթացները մարզադահլիճում չեն անցկացնում՝ պայմանավորված դրա բացակայությամբ: |
| Ուսումնական հաստատության շենքը | Գրադարանն ունի ժամանակակից |

| | |
|---|---|
| հարմարեցված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անվտանգ տեղաշարժ և ուսուցում ապահովող պայմաններին (թեք հարթակներ, լայն դռներ և այլն): | գրականությամբ համալրվելու կարիք: |
| Ուսումնական հաստատության միջանցքների հատակները սայթաքուն չեն: | Նյութատեխնիկական բազան, զննական պարագաները, դիդակտիկ նյութերը, սպորտային մարզագույքը, ԲՏՃՄ առարկաների դասավանդման համար անհրաժեշտ նյութերն ու սարքավորումներն ունեն հարստացման, համալրման կարիք: |
| Ուսումնական հաստատության նախասրահում, բոլոր հարկերում, դասասենյակներում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցասլաքներով: | Սանհանգույցներից 2-ն են նորոգված և հարմարեցված, մյուս 4-ը կարիք ունեն վերանորոգման և հարմարեցման կարիք, սանհանգույցներում հոսող ջրի խնդիր կա: |
| Ուսումնական հաստատությունն ապահովված է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով: | Աշակերտական սեղանները, աթոռները շատ հին են և գտնվում են անբարվոք վիճակում, գրատախտակները հին են և մաշված, փոխարինման կարիք կա: |
| Ուսումնական հաստատությունն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով: | Ուսումնական հաստատությունը չունի ցանկապատ, ինչը խիստ վտանգավոր է, քանի որ դպրոցը գտնվում է արագընթաց փողոցի անմիջական հարևանությամբ: |
| Ուսումնական հաստատության բոլոր սանհանգույցներն ապահովված են հիգիենայի պարագաներով (օճառ, թուղթ և այլն): | Կահավորման և բարեկարգման ենթակա է ուսուցչանոցի գույքը: Ուսուցչանոցն ապահովված չէ ինտերնետ կապով և համակարգչով, ինչի անհրաժեշտությունը կա: |
| Ուսումնական հաստատությունում առկա է սննդի կետ, բուժկետ, գրադարան, կահավորված ռեսուրս սենյակ: | Ուսումնական հաստատության դասասենյակներում նստարանների թիվը և դրանց միջև հեռավորությունը մասնակի է համապատասխանում առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերին: |
| Հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հարմարեցված սանհանգույցների առկայություն: | Դպրոցը չունի ժամանակակից պահանջներով կահավորված լաբորատորիա, առարկայական սենյակներ, միջոցառումների դահլիճ: |
| Բարեկարգ ճաշարանի,սպասքով ապահովված խոհանոցի առկայություն: | Ճաշարանում տեղադրված են շախմատ դասասենյակի սեղանները,աթոռները,որոնք փոխարինման կարիք ունեն(7 սեղան, 40 աթոռ),որի արդյունքում շախմատ առարկայի գույքը կտեղադրվի շախմատի դասասենյակում՝դասասենյակ հատկացնելու դեպքում: |

## 2.Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծությունը

Ուսումնական հաստատության Կառավարման մարմինը ուսհաստատության խորհուրդն է, որի գործառույթներն ամրագրված են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում և ուսումնական հաստատության կանոնադրության մեջ: Խորհուրդն ունի 9 անդամ:

*Աղյուսակ 8. Կառավարման խորհրդի անդամների մասին տվյալներ*

| N | Անուն, ազգանուն | Ու՞մ կողմից է առաջադրված | Աշխ. վայրը |
|---|---|---|---|
| 1 | Ղևոնդյան Գոհար | ԿԳՄՍ | Լոռու մարզպետարան |
| 2 | Ավետիսյան Կարեն | Մարզպետարան | Լոռու մարզպետարան |
| 3 | Կոստանյան Էրիկ | Մարզպետարան | Լոռու մարզպետարան |
| 4 | Հառվհաննիսյան Ասքանազ | Մարզպետարան | ԲԷՑ /ՓԲԸ/ |
| 5 | Գրիգորյան Վահե | Համայնքապետարան | Վանաձորի համայնքապետարան |
| 6 | Մովսիսյան Արփինե | Մանկ. խորհուրդ | Վանաձորի թիվ 9 դպրոց |
| 7 | Առաքելյան լուսինե | Մանկ. խորհուրդ | Վանաձորի թիվ 9 դպրոց |
| 8 | Պետրոսյան Արմինե | Ծնող. խորհուրդ | Թուֆենկյան /ՍՊԸ/ |
| 9 | Բորջյան Քրիստինե | Ծնող. խորհուրդ | - |

Հաստատության տնօրենը կառավարման մարմնի նիստերին մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով, խորհրդի նիստերն արձանագրվում են: Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է՝ համաձայն սահմանված կարգի, անդամները փոխգործակցում են, պահպանում են բարեվարքության կանոնները: Կայացրած որոշումները կատարվում են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան: Խորհրդի աշխատանքները կազմակերպում է խորհրդի նախագահը՝ խորհրդի մնացած անդամների և հաստատության տնօրենի աջակցությամբ: Կառավարման խորհրդի գործունեությունը ուղղված է ուսումնական հաստատության կառավարման արդյունավետության բարձրացմանը, հնարավոր կարիքների բացահայտմանն ու բավարարմանը: Այդ նպատակով խորհուրդը՝

- ✓ աջակցում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարմանը,
- ✓ դիտարկում և վերահսկում է ԴԶԾ-ի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացումը,
- ✓ դիտարկում և ուսումնասիրում է ԴԶԾ-ի կատարման ամենամյա հաշվետվությունները,
- ✓ հաստատում է դպրոցի կազմակերպական կառուցվածքը,
- ✓ հաստատում է դպրոցի ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| Կառավարման խորհրդի անդամները կարգի համաձայն կատարում են իրենց լիազորությունները: | Առկա է արագ արձագանքման, բազմակարծության և ակտիվության պակաս: |
| Խորհրդի նիստերն անց են կացվում սահմանված կարգով, արձանագրվում են: | Որոշ անդամներ մշտապես ցուցաբերում են ձեռնպահ վերաբերմունք: |
| Խորհուրդը կառուցողական համագործակցությամբ քննարկում է դպրոցի ուսումնադաստիարակչական, վարչատնտեսական և այլ ոլորտներին առնչվող հարցեր: | Առկա է իրավագիտակցության և բարձր պատասխանատվության պակաս որոշ անդամների մոտ: |

## 3. Հաստատության համագործակցությունը ՏԻՄ-ի, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմնի, շահառու կազմակերպությունների հետ

ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը կարևոր է համարում համագործակցությունը բոլոր շահառու խմբերի և կազմակերպությունների հետ, ովքեր կարևորություն են տալիս դպրոցի զարգացմանն ու առաջընթացին, պատրաստ են կառուցողական համագործակցության՝ ի նպաստ հաստատության կառավարման և ուսումնադաստիարակչական գործընթացների արդյունավետության բարձրացման, համայնքում դպրոցի դերի բարձրացման և կարևորման: Այս համատեքստում կարևոր է դպրոց-ՏԻՄ համագործակցության արդյունավետության խթանումը, ինչին իր անմիջական գործողություններով կարող է նպաստել ուսհաստատության տնօրենը:

## ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի համագործակցությունը ՏԻՄ-ի հետ և համայնքի հետ

Աներկբայորեն կարելի է պնդել, որ աշխատանքում հաջողությունները, կառուցողական համագործակցային հարաբերությունների հաստատումը կախված չէ մեկ կողմից. աշխատանքում հաջողություններ ունենալու համար անհրաժեշտ է, որ բոլոր կողմերն էլ ներդնեն առավելագույն ջանքերը, որպեսզի աշխատանքի պտուղները լինեն արգասաբեր: Այս ամենը գիտակցելով՝ կարևորում ենք ՏԻՄ-ի և համայնքի հետ կառուցողական ու նպատակային համագործակցությունը:

Հաստատության համագործակցությունը ՏԻՄ-ի հետ իրականացվում է՝ հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածը, համատեղ կազմակերպվում են համայնքային նշանակության մշակութային, սպորտային միջոցառումներ՝ սերտորեն ներգրավելով աշակերտներին և դպրոցի ռեսուրսները: Նկատենք, սակայն, որ համայնքի ներկայացուցիչների ներգրավվածությունը դպրոցի գործունեությանը բավականին թույլ է, ինչը, մեր համոզմամբ, իր բացասական ազդեցությունն է բերում համայնքում դպրոցի դերի արժևորմանը: Ուստի կարևորում ենք, որ դպրոցն էլ իր հերթին ընդառաջ գնա համայնքի հետ առավել ակտիվ համագործակցությանը, հաճախակի կազմակերպի հանդիպումներ, միջոցառումներ, ակտիվացնի դպրոցի սոցիալական դերը: Այս նպատակով հարկ է, որ դպրոցն ամեն կերպ խրախուսի աշակերտների և ուսուցիչների կողմից համայնքային նշանակության ծրագրերի, միջոցառումների, իրականացումը, նախագծային աշխատանքներ իրականացնելիս ուղղորդի աշակերտներին դեպի համայնք: Նման գործելավոճը ենթադրում է, որ դպրոցն իր վրա է վերցնում կարևոր առաքելություն՝ դրական օրինակ հանդիսանալով նաև համայնքի ակտիվ մասնակիցների համար, ովքեր կարող են իրենց ներուժն օգտագործել դպրոցի զարգացման համար:

## ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի համագործակցությունը կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ

Կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ համագործակցությունը նույնպես կարևոր ու առանցքային գործոն է՝ առավել

որակյալ կառավարում և ուսումնադաստիարակչական գործընթաց ունենալու համար: Ստացվում է, որ վերջիններս դպրոցի համար դառնում են օգնող, աջակցող ձեռքեր, խորհրդատուներ, գործընկերներ, ուստի և վերջիններիս հետ բաց ու թափանցիկ համագործակցային հարաբերություններ կառուցելը բխում է դպրոցի լավագույն շահերից: Նկատենք, որ այս պարագայում նույնպես մեկ կողմի շահագրգռվածությունը բավարար չէ. համագործակցությունը պետք է լինի ամուր, անաչառ, որպեսզի ակնկալվող արդյունքը չդառնա լոկ իմիտացիա, այլ ունենա իրական արժեք: Անշուշտ, արդյունավետ համագործակցությունն այստեղ էլ իր նպաստն կբերի ուսումնական հաստատության կառավարման և ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրմանը: Դպրոցն ակտիվորեն է համագործակցում Լոռու մարզպետարանի կրթության վարչության, ԿԳՄՍ-ի, ԿՏԱԿ-ի, ԳԹԿ-ի, ՏՄԱԿ-ի, ԿԶՆԱԿ հիմնադրամի հետ և մշտապես կարևորում է վերջիններիս աջակցող դերը դպրոցի զարգացման գործում: Արդյունավետ համագործակցությունը գալիս է փաստելու, որ դպրոցն ամեն կերպ ընդառաջ է գնում բաց և հաշվետու համագործակցությանը, կարևորվում է կարծիքներն ու առաջարկությունները, դիտարկում է առողջ քննադատությունն ու առավել մոտիվացվում գնահատանքից ու խրախուսանքից: Ըստ էության՝ նմանօրինակ կառուցողական փոխգործակցությունը խոսում է նաև դպրոցի լավագույն շահերից, սակայն չենք կարող չնկատել, որ հատկապես շահառու կազմակերպությունների հետ համագործակցության առումով մանկավարժական համակազմի կողմից նկատելի է որոշակի պասիվություն, անտարբերություն, ինչը խոսում է այն մասին, որ այս մասով առկա են լրջագույն անելիքներ:

**ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի համագործակցությունը ծնողական համայնքի հետ**

Դիտարկելով ծնողական համայնք-դպրոց համագործակցության եզրերը՝ կարելի է նկատել, որ ունենք դե' դրական, թե' բացասական պատկեր: Ծնողների մի մասն իրապես պատասխանատու կերպով է մոտենում դպրոցին, իրենց երեխաների կրթությանը, ամեն կերպ փորձում է մասնակցել ուսումնադաստիարակչական գործընթացին ու դպրոցի կառավարմանը՝ իր իրավասությունների սահմաններում: Արդյունքում՝ շահում են թե' դպրոցը, թե' ծնողը, թե' երեխան: Պետք է նշենք նաև, որ

ծնողների մի մասի կողմից նկատելի է ձեռնպահ կամ անտարբեր վերաբերմունք դպրոցի գործունեությանը, ինչը լրջագույն խնդիր է, քանի որ միասնական ու հաստատուն ծնողական համայնք ունենալը դառնում է ոչ իրատեսական: Բացի դա, անտարբերություն դրսևորվում է ոչ միայն ներդպրոցական կյանքի նկատմամբ, այլ որոշ դեպքերում նաև՝ սեփական երեխաների կրթությանը մասնակցելու առումով, ինչը խոսում է պատասխանատվության բացակայության և ծնողավարական հմտությունների ցածր մակարդակի մասին: Այս պարագայում դպրոցն ունի լրջագույն անելիքներ՝ նմանօրինակ ծնողների հետ աջակցման, իրազեկման ու խորհրդատվական աշխատանք տանելու տեսանկյունից: Բնականաբար, այս մարտահրավերների չեզոքացումն իր դրական ազդեցությունը կբերի նաև ուսումնադաստիարակչական որակի բարձրացման, դպրոցում բարոյահոգեբանական միջավայրի կայունացման վրա, ուստի ծնողների հետ խոր ու կառուցողական համագործակցության հաստատումն առաջնային ու հրատապ լուծում պահանջող խնդիրների շարքում է:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| Դպրոցն ակտիվորեն համագործակցում է կառավարման մարմինների հետ՝ օրենքի սահմաններում կատարելով իր պարտավորությունները, հանդես գալով հաշվետու և թափանցիկ աշխատելաոճով: | Շահառու կազմակերպությունների սակավ քանակ: |
| Շահառու կազմակերպությունների հետ առկա է համագործակցություն: | Համագործակցության ընթացքում պասիվություն որոշ մանկավարժական աշխատողների շրջանում: |
| Դպրոցը հիմնականում մասնակցում է շահառու կազմակերպությունների կողմից իրականացվող վերապատրաստումներին, ծրագրերին: | Համայնքի հետ համագործակցություն հաստատելու դժվարություններ, պասիվ համայնք, պասիվ մանկավարժական համակազմ: |
| Դպրոցը շահագրգիռ է կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ համագործակցության խորացմանն ու շարունակականությանը: | Համայնքի կողմից նկատելի է փոխգործակցության և փոխօգնության պակաս: |
| Դպրոցի և ՏԻՄ-ի միջև առկա է համագործակցություն, որն իր նպաստն է բերում դպրոց-համայնք կապի ամրակայմանը: | Որոշ ծնողներ ունեն ձեռնպահ վերաբերմունք, պասիվ են և անտարբեր: |
| Ծնողական համայնքի հիմնական մասը պատասխանատու է, ունի հարգալից վերաբերմունք, դպրոցի, մանկավարժների նկատմամբ: | Որոշ ծնողների մոտ լիարժեքորեն ձևավորված չեն ծնողավարական հմտությունները, ինչը խանգարում է ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ իրականացմանը: |
| Ծնողական համայնքի հիմնական մասն ակտիվ | |

| | |
|---|---|
| մասնակցություն է ցուցաբերում ներդպրոցական կյանքին՝ օգնելով և աջակցելով մանկավարժական աշխատողներին: | |

## 4. Հաստատության խորհրդակցական մարմինները

### ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի առարկայական մասնախմբերը

Դպրոցում ձևավորվող առարկայական մեթոդական միավորումների նպատակն է կամակերպել և կանոնակարգել մեթոդական աշխատանքները: Առարկայական մեթոդական միավորումները կամ մասնախմբերը մոտ կամ հարակից առարկաներից կազմված առարկայական խմբեր են, որոնք նպաստում են ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ իրականացմանը, կրթության որակի բարձրացմանը, մեթոդապես հագեցած, դասագործընթաց ունենալուն: Մեթոդական միավորումների նիստերը գումարվում են ամիսն առնվազն մեկ անգամ, սահմանված կարգով նիստերն արձանագրվում են: Մեթոդական միավորումներն իրականացնում են հետևյալ գործառույթները.

- ուսհաստատությունում ապահովել մանկավարժական օրինակելի փորձի փոխանակում,
- իրականացնել քննարկումներ՝ վերաբերող մեթոդամանկավարժական, ուսումնադաստիարակչական հարցերին, արտադասարանական, արտադպրոցական միջոցառումներին,
- նպաստել ուսուցիչների մասնագիտական որակների զարգացմանը,
- ուսումնասիրել կրթության վերաբերյալ նորմատիվային և մեթոդական փաստաթղթեր,
- կազմել ուսումնական, թեմատիկ պլաններ,
- իրականացնել փոխադարձ դասալսումներ, արդյունքների քննարկում, վերջնարդյունքների ամփոփում ,
- իրականացնել հեղինակային ծրագրերի, մեթոդների վերլուծություն,

- մշտադիտարկել առարկաների դասավանդման վիճակը, հանդես գալ առաջարկություններով և այլն:

Մեթոդական միավորումների աշխատանքը բազմաբնույթ է: Այն միտված է ուսուցչի մասնագիտական որակի բարձրացմանը՝ խրախուսելով կոլեկտիվում աշխատելու և համագործակցելու վերջինիս ցանկությունը: Առարկայական մեթոդական միավորման բոլոր անդամներն ունեն հավասարազոր իրավունքներ ու պարտականություններ: Իրենց կատարած աշխատանքով վերջիններս հաշվետու են մեթոդական միավորման նախագահին, ով ի պաշտոնե, համակարգում է մեթոդմիավորման աշխատանքները՝ դրանք ամփոփելով մոթեդմիավորման նիստերի ժամանակ: Մանկավարժական այս օղակի գործունեության հենքում մանկավարժական որակների բարձրացումն է, որն ուղղակի կերպով պայմանավորում է ուսումնական գործընթացում կրթական չափորոշչով սահմանված վերջնարդյունքների ի կատար ածումը, ուստի կարելի է ասել, որ յուրաքանչյուր ուսուցիչ կարող է իր օրինակով խրախուսել մյուսին՝ ի նպաստ կրթական համակարգի բարելավման և ուսումնական գործընթացի անցնցում իրականացման: Հաստատությունում գործում են թվով 3 առարկայական մասնախմբեր:

***<u>Աղյուսակ 6. Տեղեկություններ ԲՏՃՄ առարկաների մեթոդական միավորման կազմի, կրթական աշխատանքային տվյալների մասին 2023-2024 ուստարի</u>***

| N | Անուն, ազգանուն | Կրթությունը | Ինչ առարկա է դասավանդում | Ուսումնական բեռնվածությունը |
|---|---|---|---|---|
| 1 | Թորոսյան Ռուզաննա | Բարձրագույն | Մաթեմատիկա, հանր., երկրաչ., ինֆորմատիկա, ԹԳՀԳ | 22 ժ. |
| 2 | Մնացականյան Կարինե | Բարձրագույն | Մաթեմատիկա, հանր., երկրաչ., | 11 ժ. |
| 3 | Մովսիսյան Արփինե | Բարձրագույն | Կենսաբանություն, բնություն | 12 ժ. |
| 4 | Ոսկիխանյան Լիլի | Բարձրագույն | Աշխարհագրություն | 8 ժ. |
| 5 | Դուրմիշյան Նունե | Բարձրագույն | Քիմիա | 6 ժ. |
| 6 | Մուրադյան Գոհար | Բարձրագույն | Ֆիզիկա | 6 ժ. |
| 7 | Աքուլյան Անահիտ | Բարձրագույն | Տեխնոլոգիա | 8 ժ. |
| 8 | Նասիբյան Ժենյա | Բարձրագույն | Շախմատ | 5 ժ. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 9 | Սարգսյան Շողիկ | Բարձրագույն | Տեխնոլոգիա | 2 ժ. |

*Աղյուսակ 7. Տեղեկություններ Տարրական առարկաների մեթոդական միավորման կազմի, կրթական աշխատանքային տվյալների մասին 2023-2024 ուստարի*

| N | Անուն, ազգանուն | Կրթությունը | Ինչ առարկա է դասավանդում | Ուսումնական բեռնվածությունը |
|---|---|---|---|---|
| 1 | Դավթյան Գայանե | Բարձրագույն | Մաթեմատիկա, երաժշտություն | 12 ժ. |
| 2 | Խարաջյան Ռուզաննա | Բարձրագույն | Դասվար | 13ժ. |
| 3 | Պապինյան Սուսան | Բարձրագույն | Դասվար | 17ժ. |
| 4 | Հոռոմյան Լուսինե | Բարձրագույն | Դասվար | 17ժ. |
| 5 | Սարգսյան Շողիկ | Բարձրագույն | Դասվար | 14ժ. |
| 6 | Խուդադյան Լուսինե | Բարձրագույն | Ֆիզկուլտուրա | 22ժ. |
| 7 | Բարոյան Գևորգ | Բարձրագույն | ՆԶՊ | 2ժ. |

*Աղյուսակ 8. Տեղեկություններ Հումանիտար առարկաների մեթոդական միավորման կազմի, կրթական աշխատանքային տվյալների մասին 2023-2024 ուստարի*

| N | Անուն, ազգանուն | Կրթությունը | Ինչ առարկա է դասավանդում | Ուսումնական բեռնվածությունը |
|---|---|---|---|---|
| 1 | Վարդանյան Անահիտ | Բարձրագույն | Հայոց եկեղեցու պատմություն | 3 ժ. |
| 2 | Ծատուրյան Նարինե | Բարձրագույն | Մայրենի, հայոց լեզու, գրականություն | 16ժ. |
| 3 | Օհանյան Գայանե | Բարձրագույն | Հայոց լեզու, գրականություն | 12ժ. |
| 4 | Ավետիքյան Լոլիտա | Բարձրագույն | Ռուսաց լեզու | 8 ժ. |
| 5 | Առաքելյան Լուսինե | Բարձրագույն | Ռուսաց լեզու, գրականություն | 12ժ. |
| 6 | Հովհաննիսյան Աննա | Բարձրագույն | Ռուսաց լեզու, գրականություն | 3 ժ. |
| 7 | Մելիքյան Հեղինե | Բարձրագույն | Անգլերեն | 16ժ. |
| 8 | Պետրոսյան Անի | | Պատմություն, հասարակագիտություն, իմ հայրենիք | 19ժ. |

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| Մեթոդական միավորման նիստերն իրականացվում են՝ համաձայն սահմանված կանոնակարգի և արձանագրվում են: | Մասնավոր դեպքերում ուսուցիչների կողմից առկա է պասիվ ներգրավվածություն, անտարբերություն մեթոդական միավորումների աշխատանքներին: |
| Մեթոդական միավորման աշխատանքներին որոշ ուսուցիչներ մասնակցում են մեծ ոգևորությամբ, ունենում լավ արդյունքներ: | Նախաձեռնող և նորարար ուսուցիչների թվի պակաս: |

## ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհուրդը

ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական կոլեկտիվի օգոստոսյան առաջին նիստում: Խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի աշխատանքը ղեկավարում է հանրակրթական դպրոցի տնօրենը (տնօրենի պաշտոնակատարը), որն ի պաշտոնե մանկավարժական խորհրդի նախագահն է: Մանկավարժական խորհուրդը բաղկացած է ուսումնական հաստատության բոլոր ՝ 30 մանկավարժական աշխատողներից: Մանկավարժական խորհրդի նիստերի մասին սահմանված ժամկետներում մասնակիցները ծանուցվում են, նիստերը բաց են խորհրդակցական ձայնի իրավունք ունեցողների համար:

ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է բարձր պատասխանատվությամբ՝ նիստերի օրակարգերում առաջադրելով դպրոցի համար առաջնային և հրատապ հիմնահարցերի քննարկումները, այդ թվում՝

- քննարկվում են հանրակրթության պետական չափորոշչի պահանջների համաձայն հանրակրթական հիմնական ծրագրերի իրականացման հարցերը,
- քննարկվում են ԿԱՊԿ ունեցող սովորողների համար ուսուցման պայմաններ ապահովելու, անհատական ուսուցման պլանին և սովորողին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններին վերաբերող հարցեր,

- քննարկվում են ուսուցման բովանդակության, մեթոդապես հագեցած դասագործընթաց ունենալու, խմբակների, երկարօրյա խմբերի ստեղծման հարցերը,
- որոշումներ են ընդունվում հաստատության ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման, սովորողների փոխադրման, խրախուսման, կարգապահական տուժ տալու վերաբերյալ և այլն:

*Աղյուսակ 9. Մանկավարժական համակազմի վերաբերյալ տեղեկատվություն*

| | |
|---|---|
| Մանկավարժական աշխատողների թիվը | **29** |
| Կամավոր ատեստավորում անցած ուսուցիչների թիվը | **1** / Մնացականյան Կարինե-մաթեմատիկայի ուսուցիչ, ստանում է հավելավճար/ |
| Պարտադիր ատաեստավորում անցած ուսուցիչների թիվը | **8** /2022-2023 ուստարի/ |
| Տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը | **1** /2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակ/ |

*Աղյուսակ 10. Տվյալներ ուսուցիչների տարիքային բաշխվածության վերաբերյալ՝ըստ տարիների*

| Ուսուցիչների թիվը | 2020-2021ուստարի | 2021-2022ուստարի | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի |
|---|---|---|---|---|
| Մինչև 30 տարեկան | 1 | 1 | 1 | 1 |
| 31-ից 40 տարեկան | 4 | 4 | 4 | 4 |
| 41ից -50 տարեկան | 4 | 4 | 5 | 5 |
| 51-ից -55 տարեկան | 4 | 4 | 5 | 5 |
| 56 տարեկան և ավելի | 9 | 8 | 8 | 8 |

*Աղյուսակ 11.Տվյալներ ուսուցչական անձնակազմի և նրանց գործունեության վերաբերյալ ՝ նախորդ 3 ուստարիների համար*

| Ցուցանիշ | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի |
|---|---|---|---|
| Բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը<br>(տոկոսի հաշվարկ. բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) | 23ուս.<br>100% | 23ուս.<br>100% | 23ուս.<br>100% |
| Ըստ մասնագիտության դասավանդող ուսուցիչների թիվը և | 23ուս. | 23ուս. | 23ուս. |

| | | | |
|---|---|---|---|
| տոկոսը<br>(տոկոսի հաշվարկ. ըստ մասնագիտության դասավանդող հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) | 100% | 100% | 100% |
| Տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը<br>(տոկոսի հաշվարկ. տարակարգ ունեցող հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) | 8<br>35% | 8<br>35% | 7<br>30% |
| Նախարարության կողմից երաշխավորվածկամ այլ կազմակերպություններում վերջին 3 տարում վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը և տոկոսը<br>(տոկոսի հաշվարկ. վերջին 3 տարում վերապատրաստում անցած հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) | 11<br>48% | 1<br>48% | 14<br>60% |
| Որպես ուսուցիչ վերապատրաստող(դասախոս) վերապատրաստված և վերապատրաստման դասընթացներ վարող ուսուցիչների թիվը և տոկոսը<br>(տոկոսի հաշվարկ. վերապատրաստման դասընթաց վարող հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) | 1<br>4% | 1<br>4% | 1<br>4% |
| Ուսուցիչների միջին տարիքը<br>(հաշարկ. հաստատության բոլոր ուսուցիչների տարիքների գումարի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին) | 50 | 51 | 52 |
| Միջազգային ու հանրապետական պարբերականներում (ամսագրերում)հոդվածներ, մասնագիտական հրապարակումներ, ինչպես նաև դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, գիտամանկավարժական, հեղինակային և այլ աշխատություններ ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը.<br>(տոկոսի հաշվարկ. հոդվածներ և վերը նշված մասնագիտական հրապարակումներն ունեցող հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) | 8<br>35% | 8<br>35% | 7<br>30% |
| Դասավանդման աշակերտակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և դրանքկիրառող ուսուցիչների թիվը և տոկոսը<br>(տոկոսի հաշվարկ. դասավանդման աշակերտակենտրոն, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և կիրառող հաստատության ուսուցիչներիթվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) | 23ուս.<br>100% | 23ուս.<br>100% | 23ուս.<br>100% |
| Ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ, այդ թվում՝ ինտերնետ, կիրառող ուսուցիչների թիվը և տոկոսը<br>(տոկոսի հաշվարկ. ուսումնական գործընթացում | 23ուս.<br>100% | 23ուս.<br>100% | 23ուս.<br>100% |

| | | | |
|---|---|---|---|
| տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ, այդ թվում ինտերնետ կիրառող ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ) | | | |
| Սովորողներին համակարգիչների կիրառմամբ տնային աշխատանքներ հանձնարարող ուսուցիչների թիվը | 23<br>100% | 23<br>100% | 23<br>100% |
| Ուսուցիչների բացակայությունների ընդհանուր թիվը (հաշվարկ. ուստարվա ընթացքում հաստատության բոլոր ուսուցիչների բացակայած օրերի ընդհանուր թիվը) | 145օր | 98օր | 98օր |
| Ուստարվա ընթացքում հաստատությունում անցկացվող ցուցադրական բաց դասերի թիվը | 10 | 19 | 24 |
| Ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչների փոխադարձ դասալսումների թիվը | 113 | 165+108 | 265 |
| Ուսումնական տարվա ընթացքում հաստատությունից դուրս անցկացվող գործնական պարապմունքների թիվը, | 3 | 10 | 34 |

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| Հաստատության մանկավարժական խորհրդի նիստերն անցկացվում են սահմանված կարգով և արձանագրվում են: | Մասնավոր դեպքերում ուսուցիչների կողմից առկա է պասիվ ներգրավվածություն, անտարբերություն խորհրդի աշխատանքներին: |
| Խորհրդի նիստում քննարկվում են ուսումնական, դաստիարակչական և այլ բնույթի հարցեր, մասնավորապես՝<br>✓ ՀՊՉ-ին համապատասխան կրթության տրամադրում<br>✓ ուսուցման բովանդակության, կրթության որակի վերաբերյալ հարցեր<br>✓ ֆորսմաժորային իրավիճակների քննարկում<br>✓ ներքին գնահատման վերաբերյալ հարցեր<br>✓ Այլ հարցեր | Ուսուցիչների շրջանում նկատելի է տարակարծության ու նախաձեռնողականության պակաս: |

## ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի աշակերտական խորհուրդը

Դպրոցի աշակերտական խորհուրդը խորհրդակցական մարմին է, որն ապահովում է սովորողների ինքնավարության համար լայն հնարավորությունները: Խորհուրդն իր գործունեությունը ծավալում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան: Աշակերտական խորհրդի աշխատանքը վերահսկում է հաստատության ուսումնական գծով տեղակալի

կողմից,քանի որ դպրոցը մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ չունի: Խորհրդի լիարժեք աշխատանքը կարող է իր նպաստը բերել դպրոցի կառավարման, ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացմանը, դպրոցում խտրականության, բռնության բացահայտմանն ու կանխարգելմանը: Սակայն հարկ է նկատել, որ աշակերտական խորհուրդը գործում է ոչ լիարժեք, ինչը լրջագույն խնդիր է սովորողների ինքնավարությունն ամբողջապես ապահովելու տեսանկյունից: Հնարավորության դեպքում՝ աշակերտական խորհրդի ջանքերով կազմակերպվում են բարեգործական աշխատանքներ: Աշակերտական խորհրդի աշխատանքներում ներգրավված են նաև ԿԱՊԿ ունեցող սովորողները: Դպրոցում երեխայի ներառականությունը խթանող թիմային աշխատանքներ են տարվում դասվարների, հոգեբանի, ուսուցչի օգնականների կողմից: Այս գործընթացին աջակցում է նաև աշակերտական խորհուրդը՝ կազմակերպելով քննարկումներ, սեմինարներ, ճանաչողական հոլովակների դիտումներ: Վերը բերված միջոցառումներով պայմանավորված՝ դպրոցում ԿԱՊԿ ունեցող երեխաների նկատմամբ դասարանների աշակերտների վերաբերմունքը դրական է, ավելի բարյացակամ և կարեկցական:

***<u>Աղյուսակ 12. Դպրոց հաճախող աշակերտների թվի վերաբերյալ տեղեկատվություն 2023 առաջին կիսամյակի դրությամբ</u>***

| | |
|---|---|
| Ընդհանուր թիվը | 183 |
| Աղջիկ | 88 |
| Տղա | 95 |

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| Աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնվում են տարատեսակ միջոցառումներ՝ ներառյալ շաբաթօրյակները, հաստատության և դպրոցամերձ տարածքի մաքրման աշխատանքները, մշակութային, սպորտային սոցիալական բնույթի նախաձեռնություններ: | Խարհուրդն ունի ռեսուրսների կարիք: |
| Աշ. խորհրդի կողմից անց են կացվում հանդիպում-քննարկումներ՝ վերաբերող հիշարժան օրերին, տոներին: | Սովորողների շրջանում քիչ թիվ են կազմում նորարարներն ու նախաձեռնողները: |
| Անցկացվում են ինքնավարության օրեր՝ «Դասը վարում է աշակերտը», «Ես գրադարանավար եմ», «Անվտանգ կենսագործունեություն», «Մաքուր | Նախաձեռնությունների, ծրագրերի իրականացման ժամանակ քիչ է ակտիվ մասնակիցների թիվը, ինչը խաթարում է խորհրդի |

| | |
|---|---|
| դպրոց», «Համայնքի նշանավորները», «Ամենամաքուր դասարանը» և այլ խորագրերով։ | լիարժեք աշխատանքը։ |
| Աշակերտական խորհուրդը մշտադիտարկում է սովորողների վարքը, համապատասխան հաշվետվությունները ներկայացնում դպրոցի տնօրենությանը։ | |

## ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ծնողական խորհուրդը

Առանցքային և կարևոր է ծնողական խորհրդի դերը դպրոցում, որն առավել խորացնում և առարկայական է դարձնում դպրոց-ծնողական համայնք համագործակցությունը։ Ծնողական խորհուրդը բավականաչափ կազմակերպված կերպով մասնակցում է ուսումնական հաստատության կառավարմանն ու նպաստում ուսումնական գործընթացի բնականոն կազմակերպմանը։ Ծնողական համայնքը հիմնականում բարեկիրթ է, իրավագիտակից, ունի սոցիալական և քաղաքացիական բարձր պատասխանատվություն, հարգանք դպրոցի, մանկավարժների և միմյանց նկատմամբ։ Խորհրդի աշխատանքները հիմնականում կազմակերպվում են ծնողական ժողովների միջոցով՝ համաձայն դպրոցի ուսումնադաստիարակչական տարեկան պլանի։ Հրավիրվում են թե' դասարանական թե' համադպրոցական ժողովներ։ Նիստերն արձանագրվում են ծնողական խորհրդի քարտուղարի կողմից։ Ծնողների գորակշիռ մասը պարտաճանաչորեն  ներկայանում է ծնողական ժողովներին, համագործակցում դասարանի ղեկավարի, ուսուցիչների և այլ սովորողների ծնողների հետ։

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| Ծնողների ներգրավվածությունը սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներին բավականին բարձր մակարդակի վրա է։ | Կան պասիվ, ցածր մակարդակի ծնողավարական հմտություններով ծնողներ։ |
| Ծնողական խորհուրդը, համագործակցելով ուսուցչական կազմի հետ, նպաստում է սովորողների բարոյական դաստիարակությանը, դպրոցում կարգապահական կանոնների պահպանմանը։ | Կան ծնողներ, ովքեր բավարար չափով հետաքրքրություն չեն ցուցաբերում իրենց երեխայի ուսումնադաստիարակչական գործընթացին, չեն մասնակցում ծնողական ժողովներին։ |
| Ծնողական խորհրդը հանդես է գալիս | Ծնողական խորհրդի անդամների շրջանում քիչ են |

| | |
|---|---|
| առաջարկություններով, այդ թվում՝ հաստատության ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքների սովորողներին աջակցություն տրամադրելու վերաբերյալ: | նախաձեռնող և ակտիվ ծնողները: |
| Ծնողական խորհուրդը ցուցաբերում է սոցիալական բարձր պատասխանատվություն: | |

## 5.Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը

Ժամանակակից դպրոցը կարիք ունի նորարար, կարողունակ, համագործակցող ու նախաձեռնող մանկավարժական աշխատողների: Ներկայիս կրթական բարեփոխումներն իրենց նոր պահանջներն են առաջադրում նաև մանկավարժներին՝ ուղղված վերջիններիս մասնագիտական և մեթոդական հմտությունների զարգացմանն ու նոր տեխնոլոգիաների տիրապետմանը: Հենց այս ամենին հասնելուն են ուղղված պետության կողմից պարբերաբար իրականացվող վերապատրաստումները, կամավոր ատեստավորման գործընթացը, զանազան կրթական ծրագրերն ու նախաձեռնությունները, որոնք կարող են իրենց դրական ազդեցությունը բերել կրթության նկատմամբ նոր հայացքի ձևավորմանը: Առանց նորագույն տեխնոլոգիաներին, ուսուցման նորագույն մեթոդներին տիրապետելու, անհնար է ապահովել կրթության բարձր որակ, ունենալ ձեռքբերումներ, զարգացնել սովորողների կարողունակություններն ու տալ վերջիններիս համակողմանի ու ընկալելի գիտելիքներ: Վերը բերվածով պայմանավորված՝ կարևոր ենք համարում մանկավարժական աշխատողների նախաձեռնողականությունը՝ տարատեսակ վերապատրաստումների և ատեստավորումների մասնակցելու առումով, ինչպես նաև ինքնակրթությունը, փորձի փոխանակումը:

Դպրոցում ամենակարևոր ռեսուրսը մարդկային ռեսուրսն է: Ժամանակակից ուսուցիչն առաջնորդ է իր աշակերտների համար, ուղղորդող, մոտիվացնող, կողմնորոշող այն օղակն է, որը պետք է համախմբի սովորողներին, ցույց տա իրական կրթության կարևորությունը, իսկ առանց ժամանակակից մեթոդների, տեխնոլոգիական գիտելիքների ու հմտությունների, դա գործնականում անհնար է: Բազմաթիվ դեպքերում լսելի է մանկավարժական համայնքի ընդվզումն այն համատեքստում, որ ներկայիս բարեփոխումները ծավալային են, դժվար հասանելի,

սակայն պետք է նկատել, որ այս կարծրատիպերը կոտրած մանկավարժներն արդեն իսկ գրանցել են լավագույն ցուցանիշներ և հենց նրանք պետք է հանդիսանան լավագույն, նորարար ու ստեղծարար մանկավարժի կերպարը, ումից պետք է սովորել, մոտիվացվել: Ակնհայտ է, որ կան դժվարություններ, որոնց լուծման համար պետք է ներդնել առավելագույն ջանքերն ու ռեսուրսները: Այստեղ շատ կարևոր է հաստատության տնօրենի մոտեցումը: Հարկավոր է անպայման խրախուսել նորարար ուսուցիչներին, ուղղորդել առավել պասիվ աշխատակիցներին՝ ցույց տալով, որ առանց նորարարական կրթական մոտեցումներին ընդառաջ գնալու նեկայիս դպրոցն ուղղակիորեն դատապարտված է ձախողման:

Դպրոցում ՀՊՉ-ի պահանջների համապատասխան ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման համար պատասխանատու են բոլոր մանկավարժական աշխատողները, ուստի և կարևորում ենք, որ վերջիններս տիրապետեն չափորոշչի պահանջներին, կարողանան սահմանված պահանջներին համապատասխան իրականացնել ուսումնական առարկայի ուսուցման պլանավորումը, դասավանդումն ու գնահատումը: Նոր չափորոշիչը հնարավորություն է ստեղծում գիտելիքահեն կրթությունից անցում կատարելու կարողունակահեն կրթության, ինչը ներկայիս դպրոցի շարժիչ ուժն է, որակյալ և մասնակցային կրթական համակարգ կառուցելու կարևոր բաղադրիչը: Կարևոր ենք համարում, որ դպրոցը կարողանա լիարժեքորեն իրականացնել չափորոշչահեն ուսումնական գործընթաց: Այս համատեքստում առանձնակի անհրաժեշտություն է, որ՝

1. Հաստատությունում ստեղծվի ուսումնական այնպիսի միջավայր, որը կխրախուսի սովորողների ինքնուրույն գործունեությունը, առանցքային կարողունակությունների ձևավորումն ու զարգացումը:
2. Գիտելիքները, կարողությունները, հմտություններն ու արժեքային համակարգը պետք է լինեն ուսումնական գործընթացի անբաժան մասը:
3. Անհատակողմնորոշիչ մանկավարժական մեխանիզմների կիրառությամբ հարկավոր է հաշվի առնել բոլոր սովորողների կրթական

կարիքները, առանձնահատկությունները՝ ուսուցման կազմակերպման ընթացքում հենվելով դրանց վրա:

4. Հարկավոր է ուսումնադաստիարակչական գործընթացում հաշվի առնել սովորողի անձնական կենսափորձը, առանձնահատուկ կարիքները, օժտվածությունը:
5. Դասերը պետք է նախօրոք պլանավորել՝ հենվելով ՀՊՉ-ների վրա:
6. Կարևոր է, որ ուսուցիչները հնարավորություն ունենան ուսումնական հաստատությունում, առցանց մանկավարժական հարթակներում սերտորեն համագործակցելու, մանկավարժական օրինակելի փորձին ծանոթանալու, ստեղծագործելու:
7. Վերապատրաստումներն ու ատեստավորումները պետք է ուսուցիչների համար դառնան ոչ թե գլխացավանք կամ ավելորդություն, այլ նորը սովորելու, ինքնաանդրադարձ կատարելու, ավելին իմանալու գործիքներ և այս համատեքստում կարևոր է դպրոցի ընդհանուր վերաբերմունքը, մրցակցային միջավայրի առկայության, կրթության նկատմամբ նոր հայացքի ձևավորման նկատմամբ:
8. Կարևոր է, որ ուսումնական հաստատության տնօրենությունն ընդառաջ գնա մանկավարժական աշխատողների զարգացման կարիքների բավարարմանը, ապահովի մեթոդական ու մասնագիտական անհրաժեշտ գրականությամբ, հաճախակի անցկացնի քննարկումներ, սեմինարներ, որոնք չեն կրի ձևական բնույթ, այլ լիարժեքորեն կնպաստեն մանկավարժների զարգացմանն ու նոր հմտությունների ձեռքբերմանը:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| Հաստատության մանկավարժական աշխատողների մի մասը առցանց համագործակցում է մանկավարժական համայնքի հետ «ԿԶՆԱԿ» «ԿՏԱԿ» շահառու կազմակերպությունների, «Հայկական կրթական միջավայր» կայքի, «Պաշարների շտեմարան» հարթակի շրջանակներում: | Որոշ ուսուցիչների դժվարությամբ են հարմարվում կրթական նորարարություններին, լավ չեն տիրապետում տեխնոլոգիաներին: |

| | |
|---|---|
| Ուսուցիչները սահմանված կարգով վարում են emis.am-ը: | Կամավոր ատեստավորմանը մասնակցած և տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը անհանգստացնող նվազ է: |
| Մանկավարժական աշխատողների որոշ մասը տիրապետում և վարում է տեխնոլոգիաների կիրառությամբ դասեր՝ սովորողների համար ապահովելով տեղեկատվությունն ինքնուրույն որոնելու, մշակելու և ներկայացնելու հնարավորություն: | Հաստատությունում կան պասիվ ու անտարբեր մանկավարժական աշխատողներ: |
| Բոլոր ուսուցիչները մասնակցում են պարտադիր ատեստավորումներին: | Մի շարք ուսուցիչներ ընդառաջ չեն գնում համագործակցությանը, նախաձեռնող չեն: |
| | Հաստատությունն ունի նորարար ուսուցիչների պակաս: |

## 6. Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը

ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ -ն իր գործունեությունն իրականացնում է՝ կարևորելով 21-րդ դարի տեխնոլոգիական պահանջներով զինված, ինքնուրույն մտածող ու գործող, ժամանակի մարտահրավերներն ընկալող և հաղթահարող ստեղծագործ ու մարդասեր քաղաքացիների ձևավորումը, ուստի և ժամանակակից դպրոցի առաքելությունը կրթական կարիքների անցնցում և արդյունավետ բավարարումն ու զարգացումն է՝ նպատակ ունենալով ապահովել ուսումնական գործընթացի քանակական և որակական բարձր ցուցանիշներ: Այդ նպատակներն անխոչընդոտ իրականացնելու նկատառումներից ելնելով՝ առաջնային ենք համարում.

- Ձևավորել ապագայի մարտահրավերներին դիմակայող, պայքարող, ստեղծարար ու նորարար սովորողներ:
- Ստեղծել ուսումնական, սոցիալ-հոգեբանական, ստեղծագործական միջավայր, որը կապահովի բոլոր սովորողների առաջնային կարողունակությունների, քննադատական, վերլուծական, ստեղծագործական մտածողության, անհատական ունակությունների, անձնային որակների զարգացումը:

- Ուսումնական հաստատությունում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դարձնել կրթության պարտադիր բաղադրիչ՝ սովորողներին հնարավորություն տալով սեփական նախաձեռնություններն ու ծրագրերը իրականացնել, այդ թվում նաև տեխնոլոգիաների կիրառությամբ:
- Յուրաքանչյուր սովորողի համար ապահովել բարոյահոգեբանական աջակցող ու հարմարավետ միջավայր, որտեղ վերջինս կարող է դրսևորել իր կարողություններն առավելագույն չափով:
- Անվերապահորեն ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթություն ստանալու հավասար իրավունքը՝ կիրառելով անհատակողմնորոշիչ մեխանիզմներ ու մանկավարժական գործիքներ՝ վերջիններիս սոցիալականացումն անցնցում ապահովելու համար:
- Կարևորելով յուրաքանչյուր սովորողի անհատական կարողություններն ու ունակությունները՝ ստեղծել միջավայր, որը հաճելի և սիրելի է սովորողի համար:
- Սովորողների մոտ ձևավորել բարձր իրավագիտակցություն, քաղաքացիական և սոցիալական պատասխանատվություն:
- Կրթության մեջ կարևորել ոչ միայն գիտելիքը, այլև կարողունակությունների և գործնական հմտությունների ձեռքբերումը:
- Ուսուցման գործընթացում կարևորել ժողովրդավարական սկզբունքների և սովորողակենտրոն մոտեցումների ապահովումը:
- Ապահովել պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան կրթական միջավայր:
- Հնարավորություններ ստեղծել սովորողների համար կրթական այլընտրանքային միջոցներով ուսուցման գործընթաց կազմակերպելու համար:
- Խթանել մանկավարժական աշխատողների մասնագիտական և մեթոդական որակների բարձրացումը՝ ուղղորդելով վերջիններիս մասնագիտական վերապատրաստումների, ինքնակրթության, փորձի փոխանակման, նորարարության:

- Իրականացնել նախագծային և հետազոտական աշխատանքներ, ինտեգրված, ոչ ֆորմալ դասեր՝ սովորողների համար ապահովելով բազմատարր ուսումնառության հնարավորություն:
- Խրախուսել նորարարությունը դպրոցում, կարևորել տեխնոլոգիաների կիրառումը:
- Կարևորել բարեվարք, աջակցող, հավասար պայմանների առկայությունը հաստատությունում:
- Կազմակերպել երկարօրյա և արտադասարանային ուսուցում:

1.Հանրակրթության պետական չափորոշիչը (այսուհետ՝ Չափորոշիչ) ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ (կոմպետենցիաներ) և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ), ուսումնական բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները, սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը:

2. Հանրակրթական հիմնական ծրագրերը (տարրական, հիմնական և միջնակարգ) մշակվում են Չափորոշչի նորմերի և դրույթների համաձայն:

3. Չափորոշիչը նպատակաուղղված է հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության քաղաքականության ապահովմանը:

4. Չափորոշչի պահանջները պարտադիր են հանրակրթական հիմնական և այլընտրանքային ծրագրերի, այդ թվում՝ առարկայական ծրագրերի, ուսումնական պլանների, դասագրքերի և ուսումնական գործընթացի բովանդակությանն առնչվող այլ ուսումնական նյութերի համար:

5. Չափորոշչի պահանջները պարտադիր են հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների համար՝ անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից և ենթակայությունից:

**Աղբյուրը՝ ՀՀ Կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի ռ 439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ Կառավարության՝ 4 փետրվարի 2021 թվականի N 136-Ն որոշում:**

*Աղյուսակ 13. 2022-2023 ուստարվա տվյալներ սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ*

| Հիմնական առարկաներ | Սովորողների թիվը | | Հիմնական առարկաներից տարեկան գնահատականների միջինը | | 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ, դասարանում պետական ավարտական քննությունների միավորների միջինը | |
|---|---|---|---|---|---|---|
| | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. |
| Հայոց լեզու | 15 | 16 | 7,2 | 5,9 | 7,4 | 14,2 |
| Մաթեմատիկա | 15 | 16 | 7 | 5,8 | 6 | 11,8 |
| Ռուսաց լեզու | 15 | 9 | - | 6,2 | | 14,7 |
| Անգլերեն | 15 | 7 | - | 6 | | 14 |
| Հայոց պատմ. | - | 16 | - | 6 | | 12,7 |
| Ֆիզիկա | - | 3 | - | 8 | | 18 |
| Կենսաբան. | - | 9 | - | 5,9 | | 12,9 |
| Աշխարհագր. | - | 4 | - | 6,5 | | 13,3 |
| Քիմիա | - | - | | | | |
| Ֆիզկուլտ. | 15 | 16 | 8,7 | 8,8 | | 9,2 |
| Ընդամենը | 75 | 96 | 22,9 | 59,1 | 13,4 | 120,8 |

*Աղյուսակ 14. Տվյալներ մարզային, հանրապետական, միջազգային առարկայական օլիմպիադաներում ու մարզական, մշակույթի ոլորտում ստեղծագործական և կատարողական մրցույթներին սովորողների մասնակցության վերաբերյալ*

| Ցուցանիշ | 2020-2021 ուստարի | 2021-2022 Ուստարի | 2022-2023 ուստարի |
|---|---|---|---|
| Մարզային առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը՝ հաստատության սովորողների ընդհանուր թվի համեմատ | | | 3աշ. 2% |
| Մարզային առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը | | | 1աշ. 33% |
| Հանրապետական առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը և տոկոսը՝ հաստատության սովորողների ընդհանուր թվի համեմատ | | | 1աշ. 0,6% |
| Հանրապետական առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը | | | 1աշ. 100% |
| Մարզային և հանրապետական մարզական ու մշակույթի ոլորտում ստեղծագործական ու կատարողական մրցույթների մասնակիցների թիվը և տոկոսը՝ հաստատության սովորողների ընդհանուր թվի համեմատ | | | 68աշ. 39% |
| Միջազգային մարզական ու մշակույթի ոլորտում ստեղծագործական ու կատարողական մրցույթներին մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը | | | 1աշ. 0,5% |

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| Դպրոցի ուսումնական պլանը մշակվել և գործածվում է չափորոշիչների պահանջներին համապատասխան: | Որոշ ուսուցիչների դժվարանում են պլանավորել և իրականացնել կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասեր: |
| Պարբերաբար անցկացվում են կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասեր՝ հագեցած ժամանակակից մեթոդներով, նախագծային աշխատանքներ, կիրառվում է պրոբլեմային և շերտավորված ուսուցում: | ՏՀՏ գործիքների կիրառման տեսանկյունից որոշ ուսուցիչներ ունեն դժվարություններ: |
| Մանկավարժական համակազմի հիմնական մասը օրվա դասերը պլանավորվում և անցկացվում են՝ հիմնվելով առարկայական չափորոշիչներում սահմանված նպատակների և վերջնարդյունքների վրա: | Ինտեգրված դասերի թիվը սահմանափակ է, ԲՏՃՄ առարկաների դասավանդման որակը բավականին թույլ է: |
| Անց են կացվում ՏՀՏ-ների կիրառմամբ դասեր: | Ուսուցիչներից շատեր խուսափում են կրթական նորարարություններից: |
| Դասերին կիրառվում են դիդակտիկ նյութեր, զննական պարագաներ: | Ուսուցիչներից շատերն ընդառաջ չեն գնում կամավոր ատեստավորմանն ու մանկավարժական փորձի փոխանակմանը: |
| Անցկացվում են ինտեգրված և միջառարկայական կապերի ապահովմամբ դասեր: | Նյութատեխնիկական բազայի ոչ բավարար հագեցվածությունն առաջ է բերում որոշակի դժվարություններ գործնական դասերի ժամանակ: |
| 2-րդ դասարանում իրականացվում է ձևավորող գնահատում: | Սպորտդահլիճի բացակայիությունը լրջագույն ռիսկեր է առաջ բերում «Ֆիզկուլտուրա» առարկայի լիարժեք դասավանդման համար: |
| | Դասապրոցեսին ուսուցիչները չեն տիրապետում գնահատման մեթոդաբանությանը, սովորողները չեն կարողանում իրականացնել փոխադարձ գնահատում, ինքնագնահատում, ինչպես նաև միավորային գնահատումը հիմնված չէ հայտորոշիչ և ձևավորող գնահատման հիման վրա: |

7.Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ներկայացումը



ՏՀՏ-ՆԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Վերջին տարիներին տեխնոլոգիաների մուտքը կրթական համակարգ աստիճանաբար փոխեց ավանդական պատկերացումները կրթության վերաբերյալ՝ դասագործընթացը դարձնելով առավել դինամիկ, զննական, ակտիվ ու պատկերավոր: Տեխնոլոգիական միջոցների, գործիքների, առցանց տեղեկատվական հարթակների կիրառումը թույլ տվեց, որ սովորողը դառնա դասի կենտրոնական սուբյեկտը՝ իր՝ հետազոտողի, բացահայտողի, ստեղծագործողի նոր դերերով: Այս ամենը դարձավ մոտիվացիայի մեծագույն աղբյուր՝ ժամանակակից սովորողին ուսումնառության գործընթացը սիրել տալու, սովորելու մոտիվացիան խթանելու համար, ուստի մեր կողմից նույնպես պարտադիր և հույժ կարևոր բաղադրիչ է համարվում այս նորամուծությունը կրթական համակարգում:

Չնայած ՏՀՏ-ների տված առավելություններին՝ դեռ բոլոր խնդիրները դրանց կիրառման համատեքստում հաղթահարված չեն. կան բազմաթիվ ուսուցիչներ, ովքեր դեռ լիարժեքորեն չեն տիրապետում տեխնոլոգիական դասեր պլանավորելուն և վարելուն, ինչը մեծագույն ռիսկեր է պարունակում: Մեզ համար ևս այդ ռիսկերը տեսանելի և անհանգստացնող են, ուստի կարծում ենք, որ այս հիմնախնդիրը ևս առաջնային է և պահանջում է հրատապ լուծում: Ինչպե՞ս անել, որ ուսուցիչներն առավել մեծ կարևորություն տան ՏՀՏ-ներին, դրանց բաղադրիչները ներառեն դասերի պլանավորման մեջ, դասը դարձնեն առավել մոտիվացնող, զննական: Կարծում ենք, որ առաջին հերթին կարևոր է, որ ուսումնասիրվեն հիմնախնդրի դրդապատճառները, իսկ դրանցից ամենաառանցքայինը ՏՀՏ-ներ կիրառելու հմտությունների բացակայությունն է ուսուցիչների շրջանում, ինչն էլ հենց ծնում է պասիվություն, մերժում: Կարծում ենք, որ բացառապես վերապատրաստումներով

այս հարցը լիարժեք չի կարող լուծվել: Խնդրո առարկան պահանջում է լուծման գործիքակազմերի մշակում հենց հաստատության ներսում: Աջակցություն ուսուցիչներին, փորձի փոխանակում, թեմատիկ քննարկումներ, և, ի վերջո, ինքնակրթություն: Մեծ է այստեղ նաև տնօրենի դիրքորոշումը՝ որպես մարդկային ռեսուրսների կառավարիչ: Հարկավոր է անպայման վերահսկել ՏՀՏ դասերի անցկացման քանակը, որակը, վերջնարդյունքը, ապահովել ուսուցիչներին անհրաժեշտ միջոցներով, լինել հետևողական, որ ՏՀՏ դասերը չկրեն իմիտացիոն բնույթ, այլ լիարժեքորեն ծառայեն իրենց նպատակին:

ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում վերը բերված խնդրի լուծումը ևս հրատապ ենք համարում, ուստի այն մեզ համար օր առաջ լուծում պահանջող հիմնախնդիրների շարքում է:



## ԿՐԹԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՆ ՈՒ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Այսօր մեր երկրում մեծ թափով իրականացվում են կրթական բարեփոխումներ, որոնք միտված են կրթական համակարգի արդիականացմանը, աջակցող ու կարողունակահեն կրթական միջավայրի ապահովմանը, կրթության որակի նշաձողի բարձրացմանը: Նշված բարեփոխումներն օրախնդիր են, քանի որ գործող երկարամյա դասավանդման մոտեցումները, առհասարակ հանրակրթության նկատմամբ մանկավարժական դիտանկյունն արդեն իսկ լիովին սպառել էր իր արդյունավետությունը և այլևս մրցունակ չէր. ուսուցման ավանդական մոդելն այլևս համատեղելի չէր կյանքի զարգացումների, տեխնոլոգիական առաջընթացի, ժամանակակից սովորողների կրթական պահանջմունքների հետ: Հենց այս ամենով պայմանավորված՝ մենք նույնպես տեսնում ենք կրթական ժամանակակից տեխնոլոգիաների և նորարարությունների կարիքը, որոնց միջոցով էլ հնարավոր է ունենալ ավելի բարձր որակի և ժամանակակից միտումներին համապատասխան կրթական համակարգ: Այս համատեքստում կարծում ենք, որ դպրոցի

առաքելությունը ժամանակակից կրթական միտումներին ընդառաջ գնալն է, ինչը, մեր համոզմաբ, կարող է էապես փոխել կրթության նկատմամբ համընդհանուր հայացքը, սովորողներին դարձնել առավել ինքնուրույն ու մոտիվացված, շահագրգռել վերջիններիս դեպի կրթությունը: ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը նույնպես ունի նորարարությունների և նորարարների կարիք, մեթոդամանկավարժական պայմանների թարմացման, արդյունավետ կրթական տեխնոլոգիաների տեղայնացման ու կիրառման անհրաժեշտություն: Բազմաթիվ դեպքերում կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասեր պլանավորելն ու վարելը, գնահատման այլընտրանքային գործիքներ կիրառելը դժվար է տրվում ուսուցիչներին, վերջիններս խուսափում են նորարարություններից, անտարբեր են, ինչի արդյունքում տուժում է կրթության որակը, դասը չի համապատասխանում չափորոշչային պահանջներին, և դպրոցը չի ունենում որակական ու քանակական բարձր ցուցանիշներ: Մենք տեսնում ենք այս խնդիրը, հասկանում դրա հետևանքներն ու ռիսկերը և պատրաստ ենք ընդառաջ գնալ դրա լուծմանը:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
| --- | --- |
| Դպրոցում կան նորարար ուսուցիչներ, ովքեր պարբերաբար անց են կացնում ՏՀՏ դասեր, ուղղորդում սովորողներին դեպի համացանցանին տեղեկատվական հարթակներ, միջառարկայական կապեր ապահովում ԹԳՀԳ ուսումնական առարկայի հետ: | Որոշ ուսուցիչների դժվարությամբ են հարմարվում կրթական նորարարություններին, չեն անցկացնում ՏՀՏ դասեր: |
| Սովորողների հիմնական մասն ունի թվային և մեդիա կարողունակության բարձր մակարդակ, ինչը օգնում է վերջիններիս ուսումնառության ընթացքում: | Ժամանակակից ուսուցման մեթոդներով կարողանում են աշխատել ոչ բոլոր ուսուցիչները: |
| Մեթոդական միավորումների աշխատանքների շրջանակներում ուսուցիչները հաճախ են պատրաստում տեխնոլոգիաների վերաբերյալ զեկուցումներ, քննարկում դրանց կիրառման առանձնահատկությունները: | Նախագծային աշխատանքների պլանավորման և իրականացման գործում որոշ ուսուցիչներ ունեն դժվարություններ: |



## 8. ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ, ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ժողովրդավարության սկզբունքներն անվերապահորեն ընդունող և պաշտպանող մեր երկրում հանրակրթական համակարգն ևս հենված է ժողովրդավարության սկզբունքների վրա, ուստի և պարտադիր է, որ դպրոցն իր աշխատանքը կառուցի բազմակարծության, ներառական միջավայրի ապահովման, մարդասիրության, իրավահավասարության և բարեվարքության վրա: Սա ենթադրում է բաց, հասանելի կառավարում, աջակցող, մասնակցային ուսումնական միջավայր և բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովում կրթական գործընթացի մասնակից հանդիսացող բոլոր խմբերի համար: Մենք կարևոր ենք համարում առողջ քննարկումներով, խոսքի ազատության պաշտպանությամբ, բազմակարծության ապահովմամբ կառավարումը, ինչը թույլ կտա, որ շահառու խմբերը զգան իրենց առանցքային դերը, վերջիններիս ձայնը լսելի լինի, որևէ մտահոգություն, բողոք, դիտարկում ստվերում չմնա:

Ներկայումս մեր երկրում մեծ կարևորություն է տրվում կրթության հավասարությանը՝ ի դեմս ներառական կրթության: Սա ենթադրում է, որ հանրակրթական ուսումնական հաստատությունը պետք է հնարավոր բոլոր պայմանները ստեղծի ԿԱՊԿ ունեցող սովորողների կրթության իրավունքն իրացնելու, դպրոցը վերջիններիս համար սիրելի և հարմարավետ դարձնելու համար: «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաների հետ աշխատանքները տարվում են՝ հաշվի առնելով վերջիններիս անհատական առանձնահատկությունները: ԿԱՊԿ ունեցող սովորողների կրթությունը իրացվում է սահմանված կարգով, աշխատում է բազմամասնագիտական թիմը, կատարվում է կարիքի գնահատում, անհրաժեշտության պարագայում կազմվում է ԱՈՒՊ: Այս ամենը, սակայն, աննպատակ և անարդյունք կլինի, եթե դպրոցում կարևոր հիմքերի վրա չդրվեն այնպիսի արժեքներ, որոնք մերժում են խտրականությունը, ընդունելի դարձնում

բազմազանությունը, կարևորում ապրումակցումն ու փոխօգնությունը: Անշուշտ, առանձնահատուկ կարիքներով սովորողներին որևէ կերպ խղճալու կարիք չկա, վերջիններիս հարկավոր է աջակցել, ընդունել, ինտեգրել, վերաբերել որպես լիարժեք անհատների: Սա մոտեցում է, որը բխում է նաև հասարակության, դպրոցի շահերից: Հենց այսպես է պետք դաստիարակել սովորողների, երբ վերջիններս ունակ են իրենց ԿԱՊԿ ունեցող դասընկերոջն աջակցել, ընդունել, սիրել: Նկատենք, որ ԿԱՊԿ ունեցող սովորողների համար առկա են հարմարություններ, գործում է ռեսուրս սենյակ, բազմամասնագիտական թիմը բավականին լավ համագործակցում է՝ ներգրավելով նաև ծնողներին: Այդուամենայնիվ, չենք կարող չփաստել, որ մանկավարժական աշխատողներից շատերն ունեն որոշակի դժվարություններ ԿԱՊԿ ունեցող սովորողների հետ աշխատելիս: Այդ դժվարությունները պայմանավորված են թե' գիտելիքների, թե´ հմտությունների պակասով, ինչը, կարծում ենք, նույնպես հրատապ հիմնախնդիրներից է, որը օր առաջ լուծում է պահանջում: Օրախնդիր ենք համարում ԿԱՊԿ ունեցող սովորողների իրավունքների, պատվի արժանապատվության պաշտպանությունը, վերջիններիս համար լիարժեք, անվտանգ ու ապահով ներառական ուսումնական միջավայրի ապահովումը, հնարավոր խտրականության և օտարման բացառումը:

Կարծում ենք, որ դպրոցում մասնակցային միջավայրը, բազմակարծությունը խթանելու համար առաջնային քայլ է դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների աշխատանքի արդյունավետության բարձրացումը: Որևէ աշխատանք, համագործակցություն, ծրագիր, որն իրականացվում է կառավարման և խորհրդակցական մարմինների կողմից, չպետք է ձևական բնույթ կրի, դառնա լոկ թղթավարություն կամ աշխատանքի իմիտացիա: Բոլոր օղակների լիարժեք աշխատանքով է հնարավոր ունենալ քանակական և որակական բարձր ցուցանիշներ, արժեքային նպատակավոր միջավայր:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
| --- | --- |
| Դպրոցում կարևորվում են ազգային և համամարդկային արժեքների սերմանումը, ինչպես նաև բարոյական դաստիարակությունը, ներքին կարգապահական կանոնների պահպանումը և' հաստատության անձնակազմի, և' սովորողների կողմից: | Բազմակարծությունը դպրոցում ունի ընդլայնման կարիք՝ պայմանավորված անտարբեր ու ձեռնպահ վարքագծով մանկավարժների մեծ թվով: |

| | |
|---|---|
| Դպրոցը կարևորում և պարտադիր է համարում բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությունը (սովորողներ, ծնողներ, ուսուցիչներ և տեղական համայնք) որոշումների կայացման գործընթացներին՝ պատասխանատվության դպրոցի կառավարմանը և կրթական գործունեությանը: | Բարեվարքության և մանկավարժական էթիկայի նորմերի խախտման մասնավոր դեպքեր են նկատվում: |
| Դպրոցը կարևորում է բարոյական և էթիկական նորմերի պահպանումը և նույնն է ակնկալում շահառու խմբերից: | ԿԱՊԿ ունեցող սովորողների հետ աշխատելու դժվարություններ ունեն որոշ մանկավարժներ: |
| Բազմակարծության, խոսքի ազատության համար որևէ արգելք չի ստեղծվում: | Ներառականության վերաբերյալ իրազեկվածությունը կրթական գործընթացի մասնակից հանդիցացող խմբերի շրջանում ցածր է: |
| ԿԱՊԿ ունեցող սովորողների համար ստեղծված է հարմարավետ, ապահով, նյութատեխնիկական բազայով հագեցած ուսումնական միջավայր: | Հնարավոր անտարբերությունը, ձեռնպահ վերաբերմունքը՝ վերաբերող դպրոցին նկատելի է և կարիք ունի չեզոքացման: |



## 9.ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից կրթական նորարարություններն իրենց հետ բերել են նոր իրողություններ: Այլևս մանկավարժական աշխատողը հնարավորություն ունի առավել եռանդուն ու լավ աշխատելով, ինքնակրթվելով, ինքնազարգանալով առանձնանալ գործընկերներից՝ համարվելով իրապես նորարար, նախաձեռնող տեսակ: Հնարավորություն ասելով՝ պետք է հասկանալ ժամանակակից տեխնոլոգիաներով ու մեթոդներով դասերի վարում, կրթական նորարարությունների կիրառում, կրթական ծրագրերին մասնակցություն, ատեստավորումներին ու վերապատրաստումներին մասնակցություն, հեղինակային կրթական ծրագրերի մշակում: Իրապես, սրանք են որակապես լավ մասնագետներ ունենալու գործիքները, որոնցից շատերն էլ ուղղակի մանկավարժական աշխատողների պաշտոնային պարտականություններն են: Եվ որպեսզի այդ պարտականությունները լիարժեքորեն կատարվեն, ուսուցիչն ունենա մոտիվացիա առավել լավ արդյունքներ ունենալու, կարևոր է վերջիններիս արժևորումն ու խրախուսումը: Նախ և առաջ, կարծում ենք,

որ ցանկացած կարողունակ ու պատասխանատու ուսուցչի համար իրական խրախուսանք է սեփական աշխատանքի քանակական ու որակական բարձր արդյունքը, ինչը ոչ միայն անհատական հաջողություն է, այլ նաև դպրոցի, շահառու խմբերի հաջողությունն է, քանի որ ամեն մի կարողունակ, ստեղծարար ուսուցչի հետ մեծ է հավանականությունը, որ ուսումնադաստիարակչական գործընթացն ունենալու է դրական արդյունք, ուստի և այստեղ մեծ է նաև հաստատության տնօրենության դրական վերաբերմունքի կարիքը նորարար ու կարողունակ կադրերին: Կարևոր է, որ յուրաքանչյուր մանկավարժական աշխատող ստանա մեթոդական, նյութատեխնիկական, խորհրդատվական աջակցություն, ապահովվի ինքնակրթության, ինքնազարգացման ռեսուրսներով, մոտիվացվի, կարողանա համագործակցել գործընկերների հետ, սովորել ու սովորեցնել:

Նկատենք, որ «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում մեծ չեն նորարար ուսուցիչների թիվը, ինչը ժամանակակից կրթական պայմանները բավարարելու համար լրջագույն բացթողում է: Այս համատեքստում, անշուշտ, տուժում է կրթության որակը, ընկնում է սովորողների առաջադիմության և սովորելու մոտիվացիայի մակարդակը: Հիմնախնդրի լուծմանն ընդառաջ գնալով՝ կարծում ենք, որ կարիք կա լրջագույն բարելավումների, իրազեկվածության և աջակցության նոր մեխանիզմների մշակման, ինչը թույլ կտա, որ բոլոր մանկավարժները կարևորեն որակյալ կրթական համակարգ ունենալու մեր և մեր պետության նպատակը:

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
| --- | --- |
| Նորարար ու նախաձեռնող ուսուցիչները պարբերաբար խրախուսվում են: | Մեծ թիվ են կազմում անտարբեր ուսուցիչները: |
| Դպրոցը փորձում է հնարավորինս մոտիվացնել ուսուցիչներին, բարձրացնել նրանց աշխատունակությունը: | Ուսուցիչներից շատերը չեն զբաղվում ինքնակրթությամբ: |
| Ուսուցիչներին տրվում է մեթոդական աջակցություն: | Դպրոցն ունի մանկավարժներին մոտիվացնելու և խրախուսելու անհրաժեշտություն և համապատասխան գործիքակազմերի մշակման կարիք: |



## 10.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ, ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Ուսումնական հաստատությունն իր ֆինանսական գործունեությունը վարում է՝ որդեգրելով բաց, թափանցիկ և հաշվետվողական աշխատելաոճ՝ յուրաքանչյուր ուստարվա համար սահմանված ֆինանսական նախահաշիվը ներկայացնելով շահագրգիռ կողմերին և ոլորտի պատասխանատուներին: Հաստատությանն իր ենթակայության տակ գտնվող ֆինանսական միջոցները ծախսում է հաստատության առաջնային կարիքների վրա՝ նախապես հաշվառելով, գնահատելով դրանք: Ըստ անհրաժեշտության՝կատարվում են ուսումնական նպատակով ծախսեր՝ ձեռք բերելով անհրաժեշտ միջոցներ: Բազմաթիվ դեպքերում առկա է ֆինանսական միջոցների անբավարարություն՝ պայմանավորված դպրոցի ֆիզիկական վիճակի, նյութատեխնիկական բազայի և ենթակառուցվածքների մասով առկա հիմնախնդիրներով: Այս պարագայում, կարծում ենք, իր կարևոր ներդրումը կբերի հաստատության վարչատնտեսական մասի համակարգողը, ում անմիջական մասնակցությամբ և օժանդակությամբ հնարավոր կլինի առավել արդյունավետ պլանավորել ծախսերը, խուսափել ցուցանիշների շեղումներից՝ լուծելով հաստատության առջև ծառացած մարտահրավերները:

Մինչև 2023-2024 ուստարին ուսումնական հաստատությունների ֆինանսավորումը պետբյուջեից կատարվել է ըստ հաստատության սովորողների թվի: 2023-2024 ուստարվանից, համաձայն ՀՀ կառավարության N 1481-Ն որոշման՝ ընդունված 22 սեպտեմբերի 2022թ-ի., ուսումնական հաստատությունները ֆինանսավորվել են ըստ դասարանների թվի, ինչի արդյունքում դպրոցի ֆինանսավորումը 2023-2024 ուստարվա սեպտեմբեր ամսին կազմել է 51 միլիոն 824.500 դրամ՝ ի տարբերություն 2023-2024 ուստարվա հունվար-օգոստոս միջակայքի, երբ բյուջեն կազմել է 31 միլիոն 365.000 դրամ:

*Աղյուսակ 15. 2023թ. հունվար-օգոստոս ամիսների դպրոցի բյուջեն*

| | |
|---|---|
| Ընդհանուր | 31 միլիոն 365.000 դրամ |
| Տարրական | 16 միլիոն 780.000 դրամ |
| Հիմնական | 14 միլիոմ 85.000 դրամ |

*Աղյուսակ 16,2023թ. սեպտեմբեր ամսի դպրոցի բյուջեն*

| | |
|---|---|
| Ընդհանուր | 51 միլիոն 824.500 դրամ |
| Տարրական | 25 միլիոն 602.000 դրամ |
| Հիմնական | 26 միլիոն 818.300 դրամ |

*Աղյուսակ 17. 2023թ. տվյալներ 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի ծախսերի վերաբերյալ*

| | |
|---|---|
| Աշխատավարձի ծախսային ֆոնդ | 45 միլիոն 369.300 դրամ |
| Կոմունալ վճարումներ | 1 միլիոն 368.684 դրամ |
| Տարեվերջյան մնացորդ | 2 միլիոն 70.99 դրամ |

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| Բյուջեի նախագիծը կազմելիս մշտապես հաշվի են առնվում հրատապ լուծում պահանջող, կենսական նշանակության խնդիրները: | Հաստատությունը չի իրականացնում ձեռնարկատիրական գործունեություն: |
| Դպրոցը պլանավորում է բյուջեն՝ հաշվի առնելով՝ անձնակազմի կարիքները, հաստատության ուսումնական պլանը, ռեսուրսները, ենթակառուցվածքների պահպանումը և սովորողների կարիքները: | Պայմանավորված շենքի ոչ տիպային լինելու հանգամանքով՝ հարմարեցման և վերակազմավորման վրա, օգտագործվում են հավելյալ ֆինանսական միջոցներ: |
| Դպրոցի ծախսերը կառավարելի են և հիմնականում հատկացվում են այն ոլորտներին, որոնք մեծ ազդեցություն ունեն սովորողների ուսման և զարգացման վրա: | Դպրոցը չունի հավելյան ֆինանսական միջոցների կայուն աղբյուրներ: |
| Դպրոցը պարբերաբար հրապարակում է ֆինանսական հաշվետվությունները իր պաշտոնական կայքում: | |



## ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ, ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ,ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ՌԻՍԿԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

### 1.Զարգացման ծրագրի նպատակներն ու ակնկալվող արդյունքները

Իրավիճակի վերլուծության, ուժեղ և թույլ կողմերի սահմանման միջոցով հնարավոր է դառնում նախանշել ԴԶԾ-ի նպատակները, որոնք պետք է լինեն թիրախային, իրատեսական և չափելի:

Պայմանավորված այն հանգամանքով, որ ԴԶԾ-ն ուղղված է առաջիկա հինգ տարիների ընթացքում դպրոցի կառավարումը, ուսումնադաստիարակչական գործընթացն անխոչընդոտ կազմակերպելուն և որակապես առավել բարձր նշաձողի հասցնելուն՝ առաջադրած նպատակները պետք է ամբողջապես արտացոլեն նշված գործոնները՝ սահմանելով կրթության որակը խթանող, ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը բարձրացնող, կրթական ծրագրերի անխոչընդոտ և սահմանված կարգով անցկացնելուն ուղղված, դպրոցի ֆիզիկական միճակի բարելավումը և նյութատեխնիկական բազայի հարստացումը նախանշող, մանկավարժական աշխատողների մասնագիտական որակները բարձրացնող, շահառուների հետ արդյունավետ համագործակցություն ապահովող դրույթներով:

Ստորև դիտարկենք «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի առաջիկա 5 տարիների զարգացման ծրագրի նպատակները, որոնք բխում են դպրոցի լավագույն շահերից՝

- Ունենալ կարողունակ, նորարար, համագործակցող, բարեվարք, կազմակերպչական հմտություններ ունեցող մանկավարժական համակազմ:
- Ունենալ բարեկարգ, կահավորված, նյութատեխնիկական բազայով հագեցած, տեխնոլոգիաներով զինված դպրոց:
- Ստեղծել և կահավորել առարկայական կաբինետներ, լաբորատորիա, սպորտդահլիճ, հանդիսությունների սրահ:

- Ստեղծել ուսուցման ժամանակակից մեթոդներով, դասատիպերով, տեխնոլոգիաներով հագեցած, ՀՊՉ-ների վրա հիմնված ուսումնական միջավայր:
- Ստեղծել հաստատության ներքին գնահատումն արդյունավետ իրականացնելու համար արդիական համակարգ, որը թույլ կտա օբյեկտիվ կերպով նախանշել բոլոր քանակական և որակական ցուցանիշները:
- Սովորողների համար ապահովել ինքնուրույն գործելու, նախաձեռնողի, հետազոտողի, բացահայտողի դերում հանդես գալու հնարավորություն՝ նախապատվություն տալով սովորողակենտրոն ուսուցմանը:
- Դպրոցում ապահովել ուսումնառության համար ապահով, մասնակցային, աջակցող, ոչ խտրական, հավասարության ու ժողովրդավարության սկզբունքների վրա կառուցված ուսումնական մթնոլորտ:
- Խորացնել կառավարման խորհրդի, շահառու կազմակերպությունների և լիազոր մարմնի հետ համագործակցությունը:
- Աշակերտական ինքնակառավարման մարմինների գործունեության համար ապահովել հարմար ու աջակցող պայմաններ:
- Ապահովել սովորողների առողջության, պատվի, արժանապատվության պահպանմանն ուղղված պայմաններ:
- Ամրապնդել դպրոց-ծնող-համայնք կապը:
- Դպրոցը դարձնել սոցիալ-մշակութային կենտրոն՝ իրականացնելով համայնքային նշանակության նախաձեռնություններ ու ծրագրեր:
- Ապահովել անհրաժեշտ պայմաններ ու միջոցներ՝ մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդների լիարժեք ու արդյունավետ գործունեության համար:
- Բացառել ու կանխարգելել բռնությունը, խտրականությունը:

Սահմանված նպատակներին հասնելու նկատառումներից ելնելով՝ ԴԶԾ-ում սահմանվել են կարևորագույն խնդիր-ուղղությունները, դրանց իրականացման ժամկետներն ու պատասխանատուները, անհրաժեշտ միջոցները, ռեսուրսները, ռիսկերն ու դրանց չեզոքացմանն ու մեղմմանն ուղղված քայլերը:

Այսպիսով, ստորև ըստ ոլորտների դիտարկենք սահմանված նպատակներն ու դրանցից բխող գործողությունները: Նկատենք նաև, որ ներկայացված հիմնախնդիրները հնարավոր է վերանայել, ենթարկել անհրաժեշտ փոփոխությունների՝ պայմանավորված նոր առաջնահերթություններով, ֆորսմաժորային իրավիճակներով:

**1.Հաստատության շենքային պայմանները, նյութատեխնիկական բազան**

| Խնդիրներ | Գործողություններ | 1.Անհրաժեշտ միջոցներ<br>2.Ժամկետ<br>3.Պատասխանատու | Ռիսկեր | Ռիսկերի կանխման գործողություններ |
|---|---|---|---|---|
| Բարեկարգ, անվտանգ, մաքուր, սանհիտարահիգենիկ պայմաններին համապատասխան շենքային պայմանների ստեղծում | 1.Կատարել վերանորոգման, բարեկարգման աշխատանքներ<br>2.Հետևել դպրոցում սանհիտարահիգենիկ կանոնների պահպանությանը<br>3.Հետևել դպրոցում անվտանգության կանոնների պահպանությանը, մեծացնել հաստատությունում անցկացվող քաղպաշտպանական միջոցառումների թիվը<br>4. Ցանկապատել դպրոցամերձ տարածքը | 1.Պետական ֆինանսավորում, դպրոցի խնայողություններ<br>2.2024-2029 թթ. շարունակաբար<br>3.Տնօրեն Վարչատնտեսական մասի համակարգող Տնտեսվար Կառավարման խորհուրդ | 1.Ֆինանսական միջոցների անբավարարություն<br>2.Ֆորսմաժորային իրավիճակներ<br>3. Թանկացումներ | 1. Կամավորների ներգրավում<br>2.Հոգաբարձուների, շրջանավարտների խորհուրդների ստեղծում<br>3. Դրամաշնորհներ<br>4.Բարերարներ<br>5 Ձեռնարկատիրական գործունեություն |
| Նյութատեխնիկական բազայի, մարզագույքի ձեռքբերում | 1.Ձեռք բերել նյութեր, սարքավորումներ, դիդակտիկն նյութեր և զննական պարագաներ բոլոր ուսումնական առարկաների դասավանդման համար<br>2. Թարմացնել համակարգչային ֆոնդը | 1.Դպրոցի խնայողություններ Դրամաշնորհներ Բարերարներ<br>2.2024-2029 թթ. շարունակաբար<br>3.Տնօրեն Վարչատնտեսական մասի համակարգող Մանկ. համակազմ Կառավարման խորհուրդ | 1Անսպասելի կարիքների հայտնաբերում<br>2.Ֆինանսական միջոցների անբավարարություն | 1.Նվիրատվություններ<br>2.Դրամաշնորհներ<br>3.Շահառու կազմակերպությունների հետ արդյունավետ համագործակցություն |
| Հարմարավետ սպորտդահլիճի ստեղծում | 1. Ստեղծել հարմարավետ սպորտդահլիճ<br>2.Ձեռք բերել մարզագույք | 1.Պետական ֆինանսավորում Դպրոցի խնայողություններ Դրամաշնորհներ Բարերարներ<br>2.2024-2025 ուստարի<br>3. Տնօրեն | 1.Ֆինանսական միջոցների անբավարարություն<br>2.Ֆորսմաժորային իրավիճակներ<br>3. Թանկացումներ | 1.Խնայողությունների օգտագործում<br>2.Բարերարների ներգրավում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Վարչատնտեսական մասի համակարգող Տնտեսվար Կառավարման խորհուրդ | | |
| Առարկայական կաբինետ/ների /ստեղծում | 1.Հիմնել էլ. գրատախտակներով, համապատասխան գույքով հագեցած առարկայական կաբինետներ<br>2. Կաբինետների համար ձեռք բերել դիդակտիկ նյութեր, զննական պարագաներ | 1.Դպրոցի խնայողություններ Դրամաշնորհներ Բարերարներ<br>2.2025-2026 ուստարի<br>3.Տնօրեն Վարչատնտեսական մասի համակարգող Տնտեսվար Կառավարման խորհուրդ | 1.Ֆինանսական միջոցների անբավարարություն | 1. Դպրոցի խնայողությունների օգտագործում<br>2. Բարերարների ներգրավում |

## 2. Կրթության որակի բարձրացում

| Խնդիրներ | Գործողություններ | 1.Անհրաժեշտ միջոցներ<br>2.Ժամկետ<br>3.Պատասխանատու | Ռիսկեր | Ռիսկերի կանխման գործողություններ |
|---|---|---|---|---|
| Սովորողների առաջադիմության բարձրացում, սովորելու մոտիվացիայի խթանում | 1.Սովորողների համար ապահովել ինքնուրույն գործելու, նախաձեռնողի դերում հանդես գալու, դասին ակտիվություն ցուցաբերելու հնարավորություն<br>2.Անցկացնել կարողունակություննների ձևավորմանն ուղղված դասեր՝ հագեցած ուսուցման ժամանակակից մեթոդներով, ՏՀՏ-ներով:<br>3.Խրախուսել, մոտիվացնել սովորողներին | 1.Հարուստ նյութատեխնիկական բազա, ՏՀՏ գործիքներ, ուսուցման ժամանակակից մեթոդներ, գնահատման այլընտրանքային ձևեր<br>Ֆինանսական միջոցներ չի պահանջում<br>2.2024-2029 թթ. շարունակաբար<br>3.Տնօրեն<br>Ս/մ նախագահ<br>Մանկավարժական համակազմ | 1.Ուսման նկատմամբ անտարբերություն<br>2Անհետաքրքիր, ձանձրալի և ուսուցչակենտրոն դասագործընթաց | 1. Ուսուցիչների համար հաճախակի մեթոդական և մասնագիտական վերապատրաստումների , սեմինարների անցկացում<br>2.Սովորողակենտրոն ուսուցում, նախագծային, հետազոտական աշխատանքների կազմակերպում |
| Դինամիկ, ժամանակակից մեթոդներով ու տեխնոլոգիաներով հագեցած դասագործընթացի ապահովում | 1.Մ/մ աշխատանքների շրջանակներում բարձրացնել ուսուցիչների հմտությունները, ուսուցման ժամանակակից մեթոդների, տեխնոլոգիաների կիրառման առումով: | 1.Մեթոդական ձեռնարկներ, ուսումնական առցանց նյութեր, հեղինակային զեկուցումներ<br>Ֆինանսական միջոցներ չի պահանջում<br>2.2024-2029 թթ. շարունակաբար<br>3.Տնօրեն<br>Մ/մ նախագահ<br>Մանկավարժական | 1.Պահպանողական հայացքներով ուսուցիչներ<br>2.Նորարարություննները մերժող կամ դժվար ընդունող ուսուցիչներ | 1. ՏՀՏ դասերի հաճախակի անցկացում<br>2. Փոխներգործուն, համագործակցային մեթոդների վերաբերյալ զեկուցումների պատրաստում, փորձարարական դասերի վարում, դասալսումների քննարկում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 2. Ուղղորդել ուսուցիչներին դեպի զանազան մասնագիտական վերապատրաստումներ, քննարկումներ, փորձի փոխանակում: | համակազմ | | |
| ՀՊՉ-ներին համապատասխան ուսումնական գործընթացի պլանավորում և անցկացում | 1. Մասնակցել վերապատրաստումների, ուղղորդել ուսուցիչներին ինքնակրթության, փոխգործակցության:<br>2.Անցկացնել փոխադարձ դասալսումներ, քննարկել արդյունքները, կատարել եզրահանգումներ | 1.Մեթոդական ձեռնարկներ, ուսումնական առցանց նյութեր, հեղինակային զեկուցումներ<br>Ֆինանսական միջոցներ չի պահանջում:<br>2.2024-2029 թթ. շարունակաբար<br>3.Տնօրեն<br>Մ/մ նախագահ<br>Մանկավարժական համակազմ | 1.Միսալ կամ թերի պլանավորված դասագործընթաց<br>2.Անհամապատասխանություն ՀՊՉ-ների պահանջներին | 1.Փորձի փոխանակում, դասալսումներ, վերապատրաստումներ |
| Սովորողների առանձնահատուկ կարիքների հաշվի առնում | 1.Բազմամասնագիտական թիմի առողջ համագործակցություն, ԱՈՒՊ- ի մշակում:<br>2. ԿԱՊԿՈՒ սովորողների կրթական կարիքների հաշվի առնում, մանկավարժական անհատականացմանորոշիչ մեթոդների կիրառում | 1.Համագործակցություն ՏՄԱԿ-ի, շահառու կազմակերպությունների հետ, մասնագիտական գրականություն, փորձի փոխանակում<br>Ֆինանսական միջոցներ չի պահանջում:<br>2.2024-2029 թթ. շարունակաբար<br>3.Տնօրեն<br>Մ/մ նախագահ<br>Մանկավարժական համակազմ<br>Բազմամասնագիտական թիմ | 1.Ուսուցիչների մասնագիտական ու մեթոդական անբավարար գիտելիքներ ու հմտություններ<br>2. Դժվարություններ ԱՈՒՊ-ի կազմման հարցում | 1. ՏՄԱԿ-ի հետ համագործակցության խորացում, վերապատրաստումներ |

## 3. Մանկավարժական աշխատողների զարգացման կարիքների բավարարում

| Խնդիրներ | Գործողություններ | 1.Անհրաժեշտ միջոցներ<br>2.Ժամկետ<br>3.Պատասխանատու | Ռիսկեր | Ռիսկերի կանխման գործողություններ |
|---|---|---|---|---|
| Մասնակցություն պարտադիր և կամավոր ատեստավորումների | 1.Խրախուսել ուսուցիչների մասնակցությունը պարտադիր և կամավոր ատեստավորումների, աջակցել վերջիններիս<br>2.Բարձր քանակական և որակական ցուցանիշներով ուսուցիչների համար ներդնել | 1.Դպրոցի միջոցներով<br>2.2024-2029 թթ. շարունակաբար<br>3. Տնօրեն<br>Մանկավարժական համակազմ<br>Կրթության կառավարման մարմին<br>Շահառու կազմակերպություն | 1.Անտարբեր և պահպանողական ուսուցիչներ<br>2.Նորարարությունից խուսափող ուսուցիչներ | 1. Ուսուցիչների համար հաճախակի անցկացնել սոց. հարցումներ, հարցախույզեր, ճանաչողական քննարկումներ, բարձրացնել վերջիններիս պատասխանատվությունը, սովորելու, ինքնակրթվելու մոտիվացիան |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | խրախուսման մեխանիզմներ | | | |
| Մեթոդական միավորումների աշխատանքների արդյունավետությ ան բարձրացում | 1.Մ/մ աշխատանքների շրջանակներում բարձրացնել ուսուցիչների հմտությունները, ուսուցման ժամանակակից մեթոդների, տեխնոլոգիաների կիրառման առումով: 2. Բարձրացնել միավորումների դերը, բացառել ձևական բնույթի նիստերը: | 1.Մեթոդական ձեռնարկներ, ուսումնական առցանց նյութեր, հեղինակային զեկուցումներ: Ֆինանսական միջոցներ չի պահանջում 2.2024-2029 թթ. շարունակաբար 3.Տնօրեն Ուս. Գծով տնօրենի տեղակալ Մ/մ նախագահ Մանկավարժական համակազմ | 1.Պահպանողական հայացքներով ուսուցիչներ 2.Նորարարությունն երը մերժող կամ դժվար ընդունող ուսուցիչներ | 1. ՏՀՏ դասերի հաճախակի անցկացում 2. Խրախուսել մեթոդական միավորումների աշխատանքներին ակտիվ մասնակցություն ցուցաբերող ուսուցիչներին |
| Օրինակելի փորձի փոխանակում, համագործակցությ ան, փոխօգնության մթնոլորտի ստեղծում | 1. Ստեղծել մրցակցային առողջ միջավայր 2.Ապահովել փոխօգնության և համագործակցության կայուն մթնոլորտ 3. Հաճախակի քննարկել դասալսումներն ու կատարել եզրահանգումներ | 1.Մեթոդական ձեռնարկներ, ուսումնական առցանց նյութեր, հեղինակային զեկուցումներ: Ֆինանսական միջոցներ չի պահանջում 2.2024-2029 թթ. շարունակաբար 3.Տնօրեն Ուս. Գծով տնօրենի տեղակալ Մ/մ նախագահ Մանկավարժական համակազմ | 1.Համագործակցությ ունից խուսափող ուսուցիչներ 2. Ոչ բարեվարք ու բարյացկամ ուսուցիչների առկայություն | 1.Խստորեն պահպանել օրինակելի վարքականոնները 2.Խրախուսել համագործակցության, փոխօգնության պատրաստ ուսուցիչներին |

## 4.Համագործակցություն կրթության գործընթացի մասնակիցների, շահառու խմբերի հետ

| Խնդիրներ | Գործողություններ | 1.Անհրաժեշտ միջոցներ 2.Ժամկետ 3.Պատասխանատու | Ռիսկեր | Ռիսկերի կանխման գործողություններ |
|---|---|---|---|---|
| Համայնքի հետ համագործակցային հարաբերություննե րի խորացում և շարունակականութ յան ապահովում | 1.Համայնքի հետ համատեղ մշտապես իրականացնել տարաբնույթ միջոցառումներ 2.Նախագծային աշխատանքների միջոցով խթանել դպրոց-համայնք կապը | 1.Մարդկային ռեսուրս/աշակերտական խորհուրդ, ծնողական խորհուրդ, մանկավարժական համակազմ/: Ֆինանսական միջոցներ չի պահանջում: 2. 2024-2029 թթ. շարունակաբար 3.Տնօրեն Մանկավարժական համակազմ Աշ. Խորհուրդ ՏԻՄ Համայնք | 1.Անտարբերություն համայնքի կողմից 2.Ռեսուրսների բացակայություն 3.Համագործակցությ ան դժվարություններ | 1. Հաճախակի անցկացնել համայնքային նշանակության միջոցառումներ, հանդիպումներ համայնքի ներկայացուցիչների հետ, սոցիալական ծրագրեր, նախագծային աշխատանքներ |
| Կրթության կառավարման մարմինների հետ համագործակցային հարաբերություննե | 1.Կրթության կառավարման մարմնի հետ իրականացնել բաց, թափանցիկ | 1.Հաշվետվություններ, քննարկումներ, հանդիպումներ: Ֆինանսական միջոցներ չի պահանջում: | 1.Ոչ օպերատիվ աշխատանք հաստատության կողմից 2.Համագործակցությ | 1. Առավել խորացնել կրթության կառավարման մարմինների հետ համագործակցությունը՝ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| րի խորացում և շարունակականութ յան ապահովում | համագործակցությու ն<br>2. Մշտապես հաշվետու լինել կառավարման մարմիններին, ներկայացնել իրավիճակի իրատեսական պատկերը | 2.2024-2029 թթ. շարունակաբար<br>3.Տնօրեն Վարչատնտեսական մասի համակարգող Կառավարման խորհուրդ | ան դժվարություններ, արագ արձագանքման բացակայություն | համատեղ հանդիպում-քննարկումների միջոցով:<br>2. Աշխատանքի կատարողականների հաշվետվություններում ներկայացնել իրական, չափելի տեղեկատվություն |
| Շահառու կազմակերպություն ների հետ համագործակցային հարաբերություննե րի խորացում և շարունակականութ յան ապահովում | 1. Մեծացնել շահառու կազմակերպություննե րի թիվը<br>2.Ընդառաջ գնալ նոր ու արդյունավետ նախաձեռնություննե րին, ծրագրերին | 1.Մարդկային ռեսուրս /աշակերտական խորհուրդ, ծնողական խորհուրդ, մանկավարժական համակազմ/: Ֆինանսական միջոցներ չի պահանջում:<br>2.2024-2029 թթ. շարունակաբար<br>3.Տնօրեն Մանկավարժական համակազմ Աշ. խորհուրդ Շահառու կազմակերպություններ | 1.Համագործակցությ ունից խուսափող ուսուցիչներ<br>2.Կազմակերպչակա ն դժվարություններ | 1.Մեծացնել համատեղ իրականացվող ծրագրերի թիվը, հանդես գալ նորարարական գաղափարներով:<br>2. Խրախուսել շահառու կազմակերպությունների հետ շարունակական համագործակցող ուսուցիչներին |

5. Ուսումնական հաստատության խորհրդակցական մարմինների գերծունեության բարելավում

| Խնդիրներ | Գործողություններ | 1.Անհրաժեշտ միջոցներ<br>2.Ժամկետ<br>3.Պատասխանատու | Ռիսկեր | Ռիսկերի կանխման գործողություններ |
|---|---|---|---|---|
| Մեթոդական միավորումների աշխատանքների արդյունավետությա ն բարձրացում | 1.Մեթոդմիավորման աշխատանքների վերահսկողություն, ուսուցիչների մասնակցության բարձրացում<br>2.Ակտիվ անդամներին խրախուսագրերի, շնորհակալագրերի տրամադրում | 1.Սոց հարցումների, հարցախույզերի անցկացում ուսուցիչների շրջանում<br>Ֆինանսական միջոցներ չի պահանջում<br>2.2024-2029 թթ. շարունակաբար<br>3.Տնօրեն<br>Ուս գծով տեղակալ<br>Մ/մ | 1.Անտարբերություն ուսուցիչների կողմից<br>2.Ռեսուրսների բացակայություն<br>3.Համագործակցության դժվարություններ | 1. Խրախուսել և մոտիվացնել ակտիվ ուսուցիչներին |
| Մանկավարժական խորհրդի աշխատանքների արդյունավետությա ն բարձրացում | 1.Խոսքի ազատության ապահովում, տարակարծության խթանում<br>2.Առաջարկություննե րի քննարկում, նախաձեռնող ուսուցիչներին աջակցության տրամադրում | 1.Մարդկային ռեսուրսի ներում<br>Ֆինանսական միջոցներ չի պահանջում<br>2.2024-2029 թթ. շարունակաբար<br>3. Տնօրեն<br>Ուս գծով տեղակալ<br>Մ/մ<br>Մանկավարժական համակազմ | 1.Կաշկանդվածություն, անտարբերություն, ձեռնպահ վերաբերմունք ուսուցիչների կողմից<br>2.Համագործակցության դժվարություններ, արագ արձագանքման բացակայություն | 1. Թույլատրելի արտոնությունների սահմանում ակտիվ ուսուցիչների համար/ նյութատեխնիկական աջակցություն, խմբակների տրամադրում/ |
| Ծնողական | 1. Դպրոց- | 1.Սոց հարցումների, | 1.Համագործակցությունի | 1.Մեծացնել ծնողական |

| | | | | |
|---|---|---|---|---|
| խորհրդի աշխատանքների արդյունավետությա ն բարձրացում | ծնողխորհուրդ համագործակցությա ն ներտացում<br>2.Բաց դռների օրեր ծնողների համար<br>3. Ծնողների մտահոգությունների, դիտողությունների քննարկում | հարցախույզերի անցկացում ծնողներիի շրջանում, ծնողական ժողովներ, հանդիպում-քննարկումներ, բաց դռների օրեր<br>Ֆինանսական միջոցներ չի պահանջում<br>2.2024-2029 թթ. շարունակաբար<br>3.Տնօրեն<br>Մանկավարժական համակազմ<br>Ծնողական խորհուրդ | ց խուսափող ծնողներ<br>2.Կաշկանդվածություն, անտարբերություն, ձեռնպահ վերաբերմունք ծնողների կողմից<br>2. Կազմակերպչական դժվարություններ | համայնքի հետ համագործակցության եզրերը |
| Աշակերտական խորհրդի աշխատանքների արդյունավետությա ն բարձրացում | 1.Աշակերտական խորհրդի դերի բարձրացում<br>2. Ինքնավարության օրերի անցկացում<br>3.Աշակերտական խորհրդին ռեսուրսների տրամադրում | 1.Ֆինանսակա միջոցների տրամադրում դպրոցի բյուջեից, տարատեսակ միջոցներով ապահովում:<br>2.2024-2029 թթ. շարունակաբար<br>3. Տնօրեն<br>Մանկավարժական համակազմ<br>Աշ. խորհուրդ | 1Կաշկանդվածություն, անտարբերություն, ձեռնպահ վերաբերմունք աշակերտների կողմից:<br>2.Մոտիվացիայի բացակայություն | Խրախուսագրերի, շնորհակալագրերի տրամադրում ակտիվ աշակերտներին |
| Շրջանավարտների և հոգաբարձուների խորհուրդների կազմավորում | 1.Նախապատրաստ ական աշխատանքների կատարում՝ նշված խորհուրդների շուտափույթ կազմավորման համար | 1Հանդիպում-քննարկումներ, ժողովներ, մարդկային ռեսուրսի օգտագործում<br>Ֆինանսական միջոցներ չի պահանջում<br>2.2024-2029 թթ. շարունակաբար<br>3.Տնօրեն<br>Վարչատնտեսական մասի պատասխանատու<br>Մանկավարժական համակազմ | 1. Անտարբերություն, ձեռնպահ վերաբերմունք շահառու խմբերի կողմից | 1. Շահառու խմբերի հետ համատեղ ծրագրերի իրականացում |

## 6. Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ապահովում

| Խնդիրներ | Գործողություններ | 1.Անհրաժեշտ միջոցներ<br>2.Ժամկետ<br>3.Պատասխանատու | Ռիսկեր | Ռիսկերի կանխման գործողություններ |
|---|---|---|---|---|
| Խոսքի ազատության, բազմակարծության խթանում | 1.Հաճախակի անցկացնել հանդիպումներ կրթական գործընթացի մասնակիցների հետ<br>2.Անցկացնել հարցախույզեր, սոց. հարցումներ<br>3.Տեղադրել առաջարկությունն երի և | 1.Մարդկային ռեսուրս<br>Ֆինանսական միջոցներ չի պահանջում<br>2.2024-2029 թթ. շարունակաբար<br>3. Տնօրեն<br>Մանկավարժական համակազմ | 1.Անտարբեր, իմիջայլոց վերաբերմունք ներդպրոցական կյանքին<br>2.Ակտիվ, համագործակցող մարդկային ռեսուրսի պակաս | 1. Խրախուսել ակտիվ նախաձեռնող ուսուցիչների, աշակերտներին, աջակցել վերջիններիս հեղինակային ծրագրերին |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | դիտողությունների արկղիկներ | | | |
| Հաստատությունում մասնակցային միջավայրի ապահովում | 1.Բոլոր ուսուցիչների և աշակերտների համար ապահովել հավասարություն՝ ներգրավելով վերջիններիս տարատեսակ ծրագրերի, նախաձեռնությունների մեջ | 1.Միջոցառումներ, ծրագրեր, նախաձեռնություններ Դպրոցի միջոցներով<br>2.2024-2029 թթ. շարունակաբար<br>3.Տնօրեն Կրթական գործընթացի մասնակիցներ | 2.Նորարարությունները և համագործակցությունը մերժող կամ դժվար ընդունող ուսուցիչներ | 1. Կատարել աշխատանքի հավասար բաժանում՝ հաստատության կառավարման և այլ հարցերին հավասարապես մասնակից դարձնելով բոլոր շահառուներին |
| Ներառական միջավայրի ապահովում | 1. Ստեղծել առողջ ու հարմարավետ ուսումնական միջավայր ԿԱՊԿ ունեցող աշակերտների համար:<br>2.Բարձրացնել բազմամասնագիտական թիմի մասնագիտական ու մեթոդական հմտությունները | 1.Համագործակցություն ՏՄԱԿ-ի, ԿԱՊԿ ունեցող սովորողների ծնողների հետ Ֆինանսական միջոցներ չի պահանջում:<br>2.2024-2029 թթ. շարունակաբար<br>3.Տնօրեն Բազմամասնագիտական թիմ Մանկավարժական համակազմ | 1.Մանկավարժական համակազմի սահմանափակ գիտելիքներ և հմտություններ<br>2. Անբավարար ֆինանսական միջոցներ՝ հարմարավետ պայմաններ ապահովելու համար | 1.Բարձրացնել իրազեկվածությունը ներառականության վերաբերյալ<br>2. ԿԱՊԿ ունեցող սովորողներին ներգրավել տարատեսակ ծրագրերում |

## ՈւՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

### 1.Կրթական կարիքների նկարագրությունը

ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը կարևորում է ժամանակի մարտահրավերներին համապատասխան, կարողունակ սերնդի ձևավորումը՝ քայլ առ քայլ ընդառաջ գնալով այդ նպատակի իրագործմանը: Սակայն պետք է նկատի առնել, որ որակյալ կրթություն ունենալը պահանջում է համակարգված ու բազմաբնեռ աշխատանք, որը, սակայն, երբեմն տուժում է՝ պայմանավորված դեռևս առկա կրթական կարիքներով: Այդ կարիքները բխում են թե' ֆիզիկական վիճակի անհարմարություններից, թե' ենթակառուցվածքների պակասից, թե' միջոցների և մարդկային ռեսուրսի սակավությունից:

Այս համատեքստում դպրոցի արդյունավետ զարգացման համար առաջնային կարիքներից են.

- ֆիզիկական վիճակի բարելավում,
- նյութատեխնիկական բազայի հարստացում,
- սպորտդահլիճի, հանդիսությունների սրահի, առարկայական կաբինետների հիմնում,
- մանկավարժական համակազմի մասնագիտական որակների բարձրացում և մեթոդական հմտությունների կատարելագործում,
- շահառու կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերի իրականացում, աջակցություն,
- կառավարման մարմինների հետ համագործակցության խորացում,
- համայնքի, տիմ-ի հետ արդյունավետ փոխգործակցություն,
- ծնողական համայնք-դպրոց կապի սերտացում,
- հոգաբարձուների, շրջանավարտների խորհուրդների ստեղծում,
- կառավարման խորհրդի աշխատանքի արդյունավետության խթանում,
- խորհրդակցական մարմինների աշխատանքների բարելավում,

Նշված կարիքների բավարարումը մեծապես կարող է նպաստել դպրոցի արդյունավետ կառավարմանը և ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

## 2.Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին

Ներկայումս իրականացվող կրթական բարեփոխումները իրենց հետ բերել են նոր փոփոխություններ, նոր հայացք հանրակրթության նկատմամբ: Հանրակրթական նոր չափորոշիչը հենվում է կարողունակությունների ձևավորմանն ուղղված կրթության վրա, ինչը ենթադրում է, որ սովորողները գիտելիքից զատ ուսումնական գործընթացի ընթացքում ձեռք կբերեն նաև մի շարք կարողունակություններ: Այս և մի շարք այլ նորամուծություններ, ինչպիսիք են՝ նախագծային ուսուցումը, ձևավորող գնահատումը, առավել մասնակցային ու աջակցող կրթական միջավայր են ապահովում սովորողների համար՝ հնարավորություն տալով ինքնուրույն սովորելու,

սեփական սխալներն ու բացթողումները հիմնավոր ու պատճառաբանված տեսնելու, ինքնանդրադարձ կատարելու: Ավանդական դասերի, մեխանիկական վերարտադրությունների և անգիր արված տեքստերի փոխարեն առաջարկելով կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասատիպեր՝ բարեփոխված կրթական համակարգն առավել խոստումնալից ու արդյունավետ կրթութական միջավայր է ստեղծում սովորողների համար, ինչը մեզ համար նույնպես ընդունելի և գնահատելի է: Չենք կարող չնշել, որ նշված բարեփոխումները ոչ բոլոր ուսուցիչների համար էր միանգամից ընդունելի և կիրառելի: Այսօր էլ բազմաթիվ նորարարություններ դժվարությամբ են տեղայնացվում ուսումնական գործընթացում: Սակայն զարգանալու և առաջ շարժվելու այլընտրանք չկա. հարկավոր է միասնական ու համատեղ ջանքերով հաղթահարել խոչընդոտները, զարգանալ՝ ունենալու համար առավել որակյալ կրթական միջավայր: Կարևոր ենք համարում նաև դպրոցի՝ որպես սոցիալական կառույցի դերը, որն ունակ է հաշվի առնել բոլոր շահառու խմբերի կարիքները, գնալ դրանց բավարարմանը՝ դառնալով կամրջող օղակ շահագրգիռ կողմերի, աշակերտների և մանկավարրժների համար:

### 3.Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին և ներուժին

Ինչպես արդեն նշվեց, դպրոցն ունի մի շարք ենթակառուցվածքների պակաս, որոնց բացակայությունը այս կամ այն կերպ ազդում է ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ իրականացման վրա: Որպես առաջնահերթություն և կարևոր հիմնախնդիր՝ կառանձնացնենք սպորտդահլիճ և հանդիսությունների սրահ ունենալը, քանի որ հենց այս ենթակառուցվածքների առկայությամբ է պայմանավորված մշակութային ու սպորտային գործունեության զարգացումը դպրոցում: Դրանք իրապես անհրաժշտություն են և հանդիսանում են ԴԶԾ-ի կարևոր և օրակարգային խնդիրներից, որոնց լուծումը մեծագույն ձեռքբերում կլինի դպրոցի համար: Կարևոր ենք համարում նաև դպրոցամերձ բակի բարեկարգումն ու ցանկապատումը, ինչը կապահովի անվտանգ միջավայր և կնպաստի ուսումնական գործընթացի՝ ոչ ֆորմալ եղանակով պլանավորմանը: Դպրոցն ունի նաև

առարկայական կաբինետների ստեղծման և համապատասխան միջոցներով ապահովման կարիք:

## ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատումը կարևոր նշանակություն ունի հաստատության արդյունավետ կառավարման գործում, ուստի կարևոր է, որ գնահատման ենթակա գործողություններն ամբողջապես արտացոլեն հաստատության գործունեությունն ըստ ոլորտների: Գնահատումը, ըստ էության, նպատակ է հետապնդում ոչ միայն որակական և քանակական ցուցնիշների դուրս բերում, այլ նաև նախատեսում է անդրադարձման հնարավորություն, ինչի արդյունքում հնարավոր կլինի առարկայորեն տեսնել թերություններն ու բացթողումները, լիարժեք ու թերի ցուցանիշները, որոնք էլ հընթացս կհանդիսանան գործիքներ՝ առավել թիրախային ու նպատակային գործելու համար: Օբյեկտիվ գնահատելու համար կարևոր է, որ գնահատումն իրականացվի՝ հենվելով գնահատվող գործողությունների առանձին և փոխկապակցված արդյունքների հիման վրա, քանի որ թե' հաստատության կառավարումը, թե' ուսումնադաստիարակչական գործընթացն անքակտելի են, շարունակում, փոխլրացնում են իրար, ուստի ԴԶԾ-ի գնահատումը պետք է վերաբերի բոլոր ռազմավարական նշանակության ոլորտներին, որոնք են

### 1.Կրթության որակի, ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կառավարման գնահատման չափանիշներ

Կրթության որակի, ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կառավարման գնահատման որակական և քանակական բարձր ցուցանիշները պայմանավորված են ստորև բերված հիմնախնդիրների արդյունավետ լուծմամբ.

- Աջակցող, մասնակցային, ՀՊՉ-ների հիման վրա կառուցված ուսումնական գործընթացի ապահովում:
- Ուսուցման ժամանակակից մեթոդներով և տեխնոլոգիաներով անցկացվող դասերի առկայություն:
- Սովորողների համար առողջ և բարենպաստ սոցիալ-հոգեբանական միջավայրի ապահովում:

- Մրցունակ, կարողունակ, որակական և քանակական բարձր ցուցանշներ ապահովող շրջանավարտների պատրաստում:
- Ինքնուրույն, նախաձեռնող, ստեղծարար, մտածող, կարծիք ու դիրքորոշում ունեցող սովորողների ձևավորում:
- Մրցունակ, կարողունակ, նորարար մանկավարժական համակազմի առկայություն:

| Գնահատվող գործողություն | Արդյունքների գնահատում |
|---|---|
| **Սովորողների առաջադիմության բարձրացում, սովորելու մոտիվացիայի խթանում** | **Գերազանց արդյունք:** Ընթացիկ ներքին գնահատման արդյունքում արձանագրվել է սովորողների առաջադիմության բարձր ցուցանիշ, առկա է սովորելու մոտիվացիայի և ուսման նկատմամբ հետաքրքրվածության բարձր մակարդակ: |
| | **Լավ արդյունք:** Ընթացիկ ներքին գնահատման արդյունքում արձանագրվել է սովորողների առաջադիմության միջին ցուցանիշ, առկա է սովորելու մոտիվացիայի և ուման նկատմամբ հետաքրքրվածության միջին մակարդակ: |
| | **Անբավարար արդյունք:** Ընթացիկ ներքին գնահատման արդյունքում արձանագրվել է սովորողների առաջադիմության ցածր ցուցանիշ, առկա է սովորելու մոտիվացիայի և ուսման նկատմամբ հետաքրքրվածության ցածր մակարդակ: |
| **Դինամիկ, ժամանակակից մեթոդներով ու տեխնոլոգիաներով հագեցած դասագործընթացի ապահովում** | **Գերազանց արդյունք:** Ուսումնական հաստատությունում բոլոր առարկաներից անց են կացվում ժամանակակից ուսուցման մեթոդներով, տեխնոլոգիաներով հագեցած սովորողակենտրոն դասեր: |
| | **Լավ արդյունք:**Մի շարք առարկաներից անց են կացվում ժամանակակից ուսուցման մեթոդներով, տեխնոլոգիաներով հագեցած սովորողակենտրոն դասեր: |
| | **Անբավարար արդյունք:**Անցկացվում են ուսուցչակենտրոն, ուսուցման ավանդական մեթոդներով դասեր, ՏՀՏ դասեր չեն իրականացվում: |
| **ՀՊՉ-ներին համապատասխան ուսումնական գործընթացի պլանավորում և անցկացում** | **Գերազանց արդյունք:** Դասերը պլանավորվում են և անց են կացվում՝ համապատասխան ՀՊՉ-ների: |
| | **Լավ արդյունք:**Դաերը պլանավորվում են և անց են կացվում՝ համապատասխան ՀՊՉ-ների մասնակիորեն: |
| | **Անբավարար արդյունք:** Դասերը պլանավորվում և անց են կացվում՝չհամապատասխանելով նոր |

| | |
|---|---|
| | չափորոշիչների պահանջների: |
| **Սովորողների առանձնահատուկ կարիքների հաշվի առնում** | **Գերազանց արդյունք:** Ուսուցման գործընթացում անվերապահորեն հաշվի են առնվում սովորողների առանձնահատուկ կարիքները: |
| | **Լավ արդյունք:** Ուսուցման գործընթացում սովորողների առանձնահատուկ կարիքները հաշվի են առնվում մասնակիորեն: |
| | **Անբավարար արդյունք:** Ուսուցման գործընթացում սովորողների առանձնահատուկ կարիքները հաշվի չեն առնվում: |
| **Ներքին գնահատման օբյեկտիվ և անաչառ իրականացում, դրանից բխող հետևանքների հաշվի առնում/ երկարօրյա ուսուցում, շերտավորված ուսուցում/** | **Գերազանց արդյունք:** Ներքին գնահատումն իրականացվում է լիարժեք, վեր է հանվել սովորողների կրթական կարիքների ամբողջական պատկերը: |
| | **Լավ արդյունք:** Ներքին գնահատումն իրականացվել է ամբողջությամբ, սակայն օբյեկտիվ պատկերն ամբողջությամբ ստանալ չի հաջողվել: |
| | **Անբավարար արդյունք:** Ներքին գնահատման արդյունքները հավաստի և չափելի չեն: |

## 2.Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի գնահատման չափանիշներ

Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի գնահատման որակական և քանակական բարձր ցուցանիշները պայմանավորված են ստորև բերված հիմնախնդիրների արդյունավետ լուծմամբ.

- Ժողովրդավարության, հավասարության, մարդասիրության սկզբունքների հիման վրա կառավարվող, խոսքի ազատությունը կարևորող աշխատանքային և ուսումնական միջավայրի առկայություն:
- Կրթական գործընթացի մասնակիցների համար մասնակցային միջավայրի ապահովում, տարակարծության կարևորում:
- Ներառական միջավայրի ստեղծում:
- Բարեվարքության կանոնների համընդհանուր սահմանում:

| Գնահատվող գործողություն | Արդյունքների գնահատում |
|---|---|
| **Կրթութական գործընթացի մասնակիցների մասնակցությունը հաստատության կառավարմանը և ուսումնադաստիարակչական գործընթացին** | **Գերազանց արդյունք:** Կրթական գործընթացի բոլոր մասնակիցները հավասարապես մասնակցում են հաստատության կառավարմանը և ուսումնադաստիարակչական գործընթացին |

| | |
|---|---|
| | **Լավ արդյունք:** Կրթական գործընթացի բոլոր մասնակիցները մասամբ են մասնակցում հաստատության կառավարմանը և ուսումնադաստիարակչական գործընթացին |
| | **Անբավարար արդյունք:** Կրթական գործընթացի բոլոր մասնակիցները բավարար չափով չեն մասնակցում հաստատության կառավարմանը և ուսումնադաստիարակչական գործընթացին |
| **Բազմակարծության ապահովումը հաստատությունում** | **Գերազանց արդյունք:** Կրթական գործընթացի բոլոր մասնակիցներն ունեն ազատ խոսքի իրավունք և հաստատությունում բազմակարծության նկատմամբ կաշկանդվածություն առկա չէ: |
| | **Լավ արդյունք:** Կրթական գործընթացի բոլոր մասնակիցներն ունեն ազատ խոսքի իրավունք, սակայն նկատելի է բազմակարծության պակաս: |
| | **Անբավարար արդյունք:** Կրթական գործընթացի բոլոր մասնակիցներն չունեն ազատ խոսքի իրավունք, նկատելի է բազմակարծության պակաս: |
| **Ներառական միջավայրի ապահովումն ու պաշտպանությունը հաստատությունում** | **Գերազանց արդյունք:** Հաստատությունում ներառական միջավայրը բարձր հիմքերի վրա է: |
| | **Լավ արդյունք:** Հաստատությունում ներառական միջավայրն ունի կատարելագործման կարիք: |
| | **Անբավարար արդյունք:** Հաստատությունում կարևորություն չի տրվում ներառական միջավայրի ապահովմանը: |

## 3.Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ապահովման գնահատման չափանիշներ

Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ապահովման գնահատման որակական և քանակական բարձր ցուցանիշները պայմանավորված են ստորև բերված հիմնախնդիրների արդյունավետ լուծմամբ.

- Խրախուսագրերի, շնորհակարագրերի, մոտիվացիոն այլ մեխանիզմների կիրառում որակական ու քանակական բարձր ցուցանիշներ ապահովող մանկավարժների նկատմամբ:
- Կարողունակ և նորարար մանկավարժների արժևորման բարձր մակարդակի առկայություն:

- Կազմակերպական այնպիսի նախադրյալների ստեղծում, որոնք միտված են մանկավարժական աշխատողների ինքնակրթության և ինքնազարգացման խթանմանը:

| Գնահատվող գործողություն | Արդյունքների գնահատում |
|---|---|
| **Նորարար և կարողունակ ուսուցիչների արժևորումն ու խրախուսումը հաստատությունում** | **Գերազանց արդյունք:** Ուսումնական գործընթացում որակական և քանակական բարձր ցուցանիշներ ապահովող բոլոր մանկավարժները մշտապես խրախուսվում և արժևորվում են հաստատության կողմից |
| | **Լավ արդյունք:** Ուսումնական գործընթացում որակական և քանակական բարձր ցուցանիշներ ապահովող բոլոր մանկավարժները երբեմն խրախուսվում և արժևորվում են հաստատության կողմից |
| | **Անբավարար արդյունք:** Ուսումնական գործընթացում որակական և քանակական բարձր ցուցանիշներ ապահովող մանկավարժները չեն խրախուսվում և չեն արժևորվում հաստատության կողմից |
| **Մանկավարժական աշխատողների ինքնակրթության հնարավորությունների ապահովումը** | **Գերազանց արդյունք:** Ուսումնական հաստատությունում ստեղծված են ուսուցիչների ինքնակրթության և զարգացման համար բոլոր անհրաժեշտ միջոցներն ու ռեսուրսները |
| | **Լավ արդյունք:** Ուսումնական հաստատությունում մասամբ առկա են ուսուցիչների ինքնակրթության և զարգացման համար անհրաժեշտ միջոցներն ու ռեսուրսները |
| | **Անբավարար արդյունք:** Ուսումնական հաստատությունում առկա չեն այն ռեսուրսներն ու միջոցները, որոնք անհրաժեշտ են ուսուցիչների ինքնակրթության և զարգացման համար: |
| **Օրինակելի փորձի փոխանակում, համագործակցության, փոխօգնության մթնոլորտի ստեղծում** | **Գերազանց արդյունք:** Հաստատության ուսուցիչները լիարժեքորեն համագործակցում են, օգնում միմյանց, անց են կացնում ինտեգրված դասեր, համատեղ միջոցառումներ: Առկա է փոխօգնության առողջ միջավայր: |
| | **Լավ արդյունք:** Հաստատության ուսուցիչները մասնակիորեն են համագործակցում, ինտեգրված դասեր, համատեղ միջոցառումներ հազվադեպ են անցկացվում: |
| | **Անբավարար արդյունք:** Հաստատության ուսուցիչները գրեթե չեն համագործակցում, փոխօգնության մթնոլորտ առկա չէ: |

## 4.Դպրոց-համայնք կապերի, ծնողական համայնքի, գործընկերների հետ համագործակցության, արտադպրոցական և երկարօրյա ուսուցման գնահատման չափանիշներ

Դպրոց-համայնք կապերի, ծնողական համայնքի, գործընկերների հետ համագործակցության, արտադպրոցական և երկարօրյա ուսուցման գնահատման որակական և քանակական բարձր ցուցանիշները պայմանավորված են ստորև բերված հիմնախնդիրների արդյունավետ լուծմամբ.

- Դպրոցի և համայնքի միջև շարունակական և կայուն համագործակցության առկայություն:
- Համայնքի ակտիվ ներգրավվածություն միջոցառումների, ծրագրերի իրականացմանը:
- Դպրոց-ծնողական համայնք փոխշահավետ համագործակցություն, ակտիվ, նախաձեռնող, պատասխանատու ծնողական համայնքի առկայություն:
- Շահառու կազմակերպությունների հետ սերտ համագործակցային հարաբերությունների առկայություն:
- Կառավարման մարմինների հետ բաց և թափանցիկ փոխգործակցություն:
- Երկարօրյա ուսուցման լիարժեք իրականացում՝ հիմնված դպրոցի ներքին գնահատման արդյունքների վրա:
- Արտադպրոցական ուսուցման իրականացում՝ հաշվի առնելով սովորողների կրթական կարիքները:

| Գնահատվող գործողություն | Արդյունքների գնահատում |
|---|---|
| **Համայնքի հետ համագործակցային հարաբերությունների խորացում և շարունակականության ապահովում** | **Գերազանց արդյունք:** Համայնքի հետ առկա է սերտ և շարունակական համագործակցություն: |
| | **Լավ արդյունք:** Համայնքի հետ համագործակցությունը ոչ հաճախակի է: |
| | **Անբավարար արդյունք:** Համայնքի հետ համագործակցություն առկա չէ |
| **Կրթության կառավարման մարմինների հետ համագործակցային հարաբերությունների խորացում և շարունակականության ապահովում** | **Գերազանց արդյունք:** Ուսումնական հաստատությունը լիարժեքորեն, բաց և թափանցիկ համագործակցում է կրթության կառավարման մարմինների հետ |
| | **Լավ արդյունք:** Ուսումնական հաստատությունն ունի որոշակի դժվարություններ կրթության կառավարման մարմինների հետ համագործակցության առումով |

| | |
|---|---|
| | **Անբավարար արդյունք:** Ուսումնական հաստատությունն ընդառաջ չի գնում կրթության կառավարման մարմինների հետ համագործակցությանը |
| **Շահառու կազմակերպությունների հետ համագործակցային հարաբերությունների խորացում և շարունակականության ապահովում** | **Գերազանց արդյունք:** Ուսումնական հաստատությունը լիարժեքորեն և արդյունավետ կերպով համագործակցում է շահառու կազմակերպությունների հետ |
| | **Լավ արդյունք:** Ուսումնական հաստատությունը մասնակիորեն է համագործակցում է շահառու կազմակերպությունների հետ |
| | **Անբավարար արդյունք:** Ուսումնական հաստատությունը չի համագործակցում շահառու կազմակերպությունների հետ: |
| **Ծնողական համայնքի հետ համագործակցային հարաբերությունների խորացում և շարունակականության ապահովում** | **Գերազանց արդյունք:** Ծնողական համայնքի հետ առկա է սերտ և շարունակական համագործակցություն |
| | **Լավ արդյունք:** Ծնողական համայնքի և  հետ համագործակցությունը ոչ հաճախակի է |
| | **Անբավարար արդյունք:** Ծնողական համայնքի հետ համագործակցություն խստ հազվադեպ է |
| **Դպրոցում իրականացվում է արտադպրոցական և երկարօրյա ուսուցում** | **Գերազանց արդյունք:** Արտադպրոցական և երկարօրյա ուսուցումն իրականացվում է լիարժեքորեն՝ հիմնված սովորողների կրթական կարիքների վրա |
| | **Լավ արդյունք:** Արտադպրոցական և երկարօրյա ուսուցումն իրականացվում է՝ ուղեկցվելով որոշակի դժվարություններով |
| | **Անբավարար արդյունք:** Արտադպրոցական և երկարօրյա ուսուցում դպրոցում չի իրականացվում |

## 5.Հալածանքի, օտարման և բռնության կանխարգելման գնահատման չափանիշներ

Հալածանքի, օտարման և բռնության կանխարգելման գնահատման որակական և քանակական բարձր ցուցանիշները պայմանավորված են ստորև բերված հիմնախնդիրների արդյունավետ լուծմամբ.

- Ուսումնական հաստատությունում օպերատիվ կերպով կանխարգելվում է դպրոցական բռնությունը:
- ԿԱՊԿ ունեցող սովորողները չեն ենթարկվում օտարման, խտրականության:
- Հաստատությունում իրականացվում են կանխարգելիչ միջոցառումներ՝ հալածանքը, բռնությունը և օտարումը բացառելու համար:

- Պարբերաբար իրականացվում են իրազեկող ակցիաներ՝ վերաբերող հալածանքի, օտարման և բռնության կանխարգելմանն ու բացառմանը:

| Գնահատվող գործողություն | Արդյունքների գնահատում |
|---|---|
| **Բռնության բացահայտում, կանխարգելում** | **Գերազանց արդյունք:** Հաստատությունում բռնություն առկա չէ, տարվում են միայն կանխարգելիչ աշխատանքներ |
| | **Լավ արդյունք:** Ժամանակին բացահայտվում և կանխարգելվում են բռնության դեպքերը |
| | **Անբավարար արդյունք:** Բռնության դեպքերը չեն բացահայտվում, բռնարարները չեն պատժվում |
| **Օտարման և հալածանքի կանխարգելում** | **Գերազանց արդյունք:** Հաստատությունում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ, հալածանք և օտարում առկա չէ: |
| | **Լավ արդյունք:** Ժամանակին բացահայտվում և կանխարգելվում են օտարման և հալածանքի դեպքերը |
| | **Անբավարար արդյունք:** Օտարման և հալածանքի դեպքերը չեն բացահայտվում և չեն կանխարգելվում |
| **Բարեվարքությունն ու մարդասիրությունը դպրոցում** | **Գերազանց արդյունք:** Կրթական գործընթացի բոլոր մասնակիցները բարեվարք են, հանդուրժող և բարյացկամ միմյանց նկատմամբ |
| | **Լավ արդյունք:** Կրթական գործընթացի մասնակիցների հիմնական մասը բարեվարք է, հանդուրժող և բարյացկամ միմյանց նկատմամբ |
| | **Անբավարար արդյունք:** Կրթական գործընթացի մասնակիցները հանդուրժող չեն, բարոյահոգեբանական մթնոլորտը դպրոցում անառողջ է |

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

### 1. Վերահսկողության մեխանիզմների ընդհանուր բնութագիրը

Հանրակրթական համակարգում մատուցվող կրթական ծառայությունների որակի վերահսկողությունը առանցքային նշանակություն ունի հանրակրթական հաստատություններում մատուցվող կրթության որակի արդյունավետության բարձրացման համատեքստում: Ըստ էության՝ վերահսկողությունն իրականացվում է՝ մշտադիտարկելու, վերահսկելու և գնահատելու դպրոցի զարգացման ծրագրով նախատեսված խնդիրների լուծման էությունը, դրանց կատարման համապատասխանությունը ծրագրում ամրագրված դրույթներին: Սա մի մեխանիզմ է, որն առավել իրատեսական է դարձնում ուսումնական հաստատության կայուն զարգացումը, ֆիզիկական վիճակի և մատուցվող ծառայությունների որակի

բարելավումը: Վերահսկողությունը նաև արդյունավետ միջոց է պատասխանատուների զգոնությունն ու աշխատունակությունը խթանելու, պարտավորությունները ժամանակին և արդյունավետ կատարելու համար: Վերահսկողությունը որևէ կերպ չպետք է սահմանափակի ԴԶԾ-ում ամրագրված խնդիրների լուծման համար պատասխանատու սուբյեկտների գործողությունները, ավելին՝ վերահսկվող ոլորտների վերաբերյալ տրվող եզրակացությունները պետք է դառնան հնարավոր թերացումները մատնանշելու, վերացնելու խթաններ և առավել զգոնություն ու զգուշություն հաղորդեն աշխատանքային գործընթացին: Հանրակարթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի վերահսկողությունն իրականացնում է ուսումնական հաստատության կառավարման խորհուրդը՝ տարեկան առնվազն երկու անգամ: Ծրագրում ամրագրված յուրաքանչյուր գործողության համար մշակվում են վերահսկողության մեխանիզմներ, սահմանվում հաշվետվության ձևեր, ժամանակացույց, որոնք ներկայացվում են խորհրդի հաստատմանը: Վերահսկողության գործընթացում կարևոր է, որ դպրոցը խորհրդի կողմից ստանա լիարժեք և համակողմանի խորհրդատվական աջակցություն, ուղղորդում ԴԶԾ-ի իրականացման բոլոր փուլերում: Ուսհաստատության զարգացման ծրագրի վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5-ամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականների հաշվետվություններն են, որոնք ներառում են համակողմանի տեղեկատվություն յուրաքանչյուր գործողության իրականացման ուղղության, կատարված աշխատանքների ընթացքի, գործողության չկատարման կամ մասնակի կատարման պատճառների վերաբերյալ: Տարեկան հաշվետվությունը ներառում է նաև զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին տեղեկատվություն:




## 2.Ուստարվա յուրաքանչյուր կիսամյակի ավարտին ներկայացվող ԴԶԾ-ի կատարողականի հաշվետվության օրինակներ

### 1.Սովորողների ակադեմիական առաջընթացն ու կրթության որակի բարելավումը.

| N | Նպատակներին ուղղված գործողություններն միջոցառումներ | Ակնկալվող արդյունք | Սահմանված ժամկետ | Կատարված աշխատանքի նկարագրություն | Սահմանված ժամկետում գործողության չկատարման պատճառները | Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկու-թյուններ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Մասնակցային, ակտիվ, դինամիկ, ՏՀՏ-ներով հագեցած ուսումնական միջավայրի ստեղծում | | | | | |
| 2 | Մոտիվացված, առաջադիմող սովորողների ձևավորում | | | | | |
| 3 | Կարողունակ, մտածող, վերլուծող, ստեղծարար սովորողների ձևավորում | | | | | |
| 4 | Կարծիք, վերաբերմունք, դիրքորոշում ունեցող սովորողների ձևավորում | | | | | |
| 5 | Հարմարավետ ուսումնական միջավայրի ապահովում ԿԱՊԿ սովորողների համար | | | | | |
| 6 | Բարեվարք, բռնությունն ու խտրականությունը մերժող ուսումնական միջավայրի ձևավորում | | | | | |
| 7 | Ինքնակրթվող, նախագծող, հետազոտող, բացահայտող սովորողների ձևավորում | | | | | |

## 2. Աշխատակազմի կառավարման և մասնագիտական զարգացման համակարգի արդյունավետությունը

| N | Նպատակներին ուղղված գործողություններն միջոցառումներ | Ակնկալվող արդյունք | Սահմանված ժամկետ | Կատարված աշխատանքի նկարագրություն | Սահմանված ժամկետում գործողության չկատարման պատճառները | Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկու-թյուններ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ժողովրդավարության, մարդասիրության, հավասարության սկզբունքներով կառավարվող հաստատություն | | | | | |
| 2 | Պատասխանատու, օրինապահ, աջակցող, իրավահավասար կառավարում | | | | | |
| 3 | Բարեկարգ, առողջ, համագործակցային ու մասնակցային աշխատանքային միջավայրի ձևավորում | | | | | |
| 4 | Մասնագիտական աճի, ինքնազարգացման ու ինքնակրթության համար բարենպաստ մթնոլորտի ապահովում | | | | | |
| 5 | Հարմարավետ, հասանելի, աջակցող համագործակցային մթնոլորտի ստեղծում աշխատակազմի միջև | | | | | |
| 6 | Մասնագիտական զարգացման համար անհրաժեշտ ռեսուրսների ու միջոցների հասանելիության ապահովում | | | | | |

## 3. Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինների ներգրավվածությունը և մասնակցայնությունը

| N | Նպատակներին ուղղված գործողություններն միջոցառումներ | Ակնկալվող արդյունք | Սահմանված ժամկետ | Կատարված աշխատանքի նկարագրություն | Սահմանված ժամկետում գործողության չկատարման պատճառները | Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկու-թյուններ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Կառավարման մարմնի հետ ուսհաստատության համագործակցության հաստատում | | | | | |
| 2 | Կառավարման մարմնին անաչառորեն հաշվետու լինելու գործընթացի ապահովում | | | | | |
| 3 | Մանկավարժական խորհրդի լիարժեք և արդյունավետ աշխատանքի կազմակերպում | | | | | |
| 4 | Մեթոդական միավորումների լիարժեք և արդյունավետ աշխատանք, մասնակցային բարձր ցուցանիշների ապահովում | | | | | |
| 5 | Ծնողական խորհուրդ-դպրոց արդյունավետ համագործակցության հաստատում | | | | | |
| 6 | Աշակերտական խորհրդի լիարժեք և | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | արդյունավետ աշխատանքի ապահովում, թույլատրելի ինքնավարության առկայություն | | | | | |
| 7. | Շրջանավարտների և հոգաբարձուների խորհուրդների կազմավորում, արդյունավետ աշխատանքային գործընթացի ապահովում | | | | | |

## 4.Դասավանդման համար անհրաժեշտ ռեսուրսների հասանելիությունը և կիրառությունը

| N | Նպատակներին ուղղված գործողություններն միորջցառումներ | Ակնկալվող արդյունք | Սահմանված ժամկետ | Կատարված աշխատանքի նկարագրություն | Սահմանված ժամկետում գործողության չկատարման պատճառները | Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկու-թյուններ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Վերանորոգված, կահավորված, նյութատեխնիկական բազայով հագեցած դասարանների, առարկայական կաբինետների, լաբորատորիայի, համակարգչային կաբինետի ստեղծում | | | | | |
| 2 | Գրքային ֆոնդով հագեցած գրադարան | | | | | |
| 3 | Հասանելի ինտերնետ կապ, համակարգիչներ, օժանդակ սարքեր, էլ գրատախտակներ | | | | | |
| 4 | ԲՏՃՄ առարկաների դասավանդման համար անհրաժեշտ նյութերի, սարքավորումների ապահովում | | | | | |
| 5 | Ճանաչողական ցուցապաստառների, քարտեզների, դիդակտիկ նյութերի, զննական պարագաների ստեղծում և ձեռքբերում | | | | | |
| 6 | Ուսուցիչների համար մեթոդական ձեռնարկների, ուսումնաօժանդակ նյութերի ձեռքբերում | | | | | |
| 7. | Վերանորոգված և կահավորված սպորտդահլիճի, հանդիսությունների սրահի, առարկայական կաբինետների, լաբորատորիայի ստեղծում | | | | | |

## 5. Մանկավարժական ինքնավարության և ակադեմիական ազատության ապահովումը.

| N | Նպատակներին ուղղված գործողություններն միջջցառումներ | Ակնկալվող արդյունք | Սահմանված ժամկետ | Կատարված աշխատանքի նկարագրություն | Սահմանված ժամկետում գործողության չկատարման պատճառները | Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկու-թյուններ |
|---|---|---|---|---|---|---|

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Մանկավարժական աշխատողների կողմից դասի պլանավորման լիարժեք ինքնուրույնության ապահովում | | | | | |
| 2 | Գրքային ֆոնդով հագեցած գրադարանի ստեղծում | | | | | |
| 3 | Մանկավարժական աշխատողների կողմից դասատիպերի ընտրության հնարավորության ապահովում | | | | | |
| 4 | Տեխնոլոգիական միջոցների կիրառման, դասագրքերից զատ այլ տեղեկատվական հարթակների ընտրության հնարավորության ապահովում ուսուցիչների համար | | | | | |
| 5 | Ոչ ֆորմալ դասերի անցկացման համար անհրաժեշտ միջոցներով ուսուցչին ապահովում | | | | | |

## 6.Բոլոր շահառուների համար դրական և ապահով մթնոլորտի ապահովվածությունը

| N | Նպատակներին ուղղված գործողություններն միջոցառումներ | Ակնկալվող արդյունք | Սահմանված ժամկետ | Կատարված աշխատանքի նկարագրություն | Սահմանված ժամկետում գործողության չկատարման պատճառները | Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկու-թյուններ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Իրավահավասար, առողջ, համագործակցային ուսումնական միջավայրի ապահովում | | | | | |
| 2 | Կրթական գործընթացի մասնակից հանդիսացող բոլոր կողմերի իրավունքների, պատվի, արժանապատվության պաշտպանություն | | | | | |
| 3 | Բարոյական նորմերի, մասնագիտական էթիկայի կանոնների պահպանություն | | | | | |
| 4 | Բռնության, օտարման, խտրականության բացառում, կանխարգելում | | | | | |
| 5 | Հարմարավետ, բարեկամական աշխատանքային և ուսումնական միջավայրի ապահովում | | | | | |

ՀԱՎԵԼՎԱԾ











ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ
ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
Engineering
laboratory

















USAID

